AZG NEW PDF.qxd 1/11/2010 11:22 PM Page 1

Azg Վազ

12 ՅՈՒՆՈՒԱՐ 2010 ԵՐԵՔՇԱԲԹԻ 1(4382)

ISSN: 1829-1651

Ֆրանսիայում կստեղծվի ցեղասպանությունների հարցով հատուկ դատական մարմին

Այս մասին «Մոնդ» թերթին հայտնել են Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Բեռնար Կուշներն ու արդարադատության նախարար Միշել Ալիո-Մարին: Դատական մարմնի ստեղծման հարցը Ֆրանսիայի խորհրդարանի օրակարգ է մտնելու 2010 թվականի առաջին կիսամյակում:

Նախարարները շեշտել են, որ ցեղասպանություն իրականացնողները, մարդկության դեմ այլ հանցագործություններ կատարողները անպայման պետք է դատապարտվեն ու պատժվեն:

Հ. Հ.

Քաղաքական ռեսուրս կա՞, ընտրազանգված էլ կլինի

Հերթական անգամ, իսկ վերջին երեք ամսում՝ երրորդ անգամ հայ ընտրողն ապացուցեց, որ ոչ մի զգացում չի տածում հանդեպ ընտրությունները: Այլապես չի կարող պատահել, որ երկրի սիրտը հանդիսացող եւ մի քանի տասնյակ հազար ընտրող ունեցող Կենտրոն համայնքից պատգամավոր դառնա մինչեւ գոնե ընտրվելը լայն հանրությանն անհայտ եւ ոչ մի բանով աչքի չընկած մեկը: Դատեք ինքներդ, եթե մարդիկ որեւէ հետաքրքրություն ունենային դեպի ընտրությունները, Արա Սիմոնյանին ընտրած յոթ հազար վեց հարյուր չգիտեմ քանի ընտրողի խնդիրը եթե մի կողմ թողնենք անգամ, ընդդիմության այդքան աղմուկից եւ Նիկոլի հեղափոխական կերպարից ազդված՝ կգային ընտրության ու կտային ոչ թե մի կերպ ծերը ծերին ձգած 5 հազար «ձեն», այլ տասնհինգ հազար, քսանհինգ հազար, տո էլ ասիմ՝ 50 հազար ձայն, ու էլ խոսելու տեղ չէր մնա, թե աման, հասեք, լցոնեցին, ծեծեցին, խախտեցին...ու ոչ մի Արա Սիմոնյան էլ չէր անցնի: Չէ, համաձայն ենք, որ Հայաստանում ընտրություններն արդեն վաղուց ու դեռ երկար ժամանակ թաղային «հեղինակությունների» ու «արա ախպերների» «դվիժենին» են, որոնց, այնուամենայնիվ, իշխանությունը եթե ուզենա՝ 5 րոպեում ծակերը

կմտցնի: Բայց դա բոլորովին էլ չի նշանակում, որ նրանք կարող էին ընտրությունների համար հերթ կանգնածների դեմն առնել: Եվ իզուր է ընդդիմությունը խոսում լցոնման ու խախտումի մասին, 7 հազար «ձենի» լցոնումս ո՞րն է՝ եթե մե՛ր ասած թվերով ընտրողն ընտրության գար, եւ ընդդիմության թեկնածուն մի 25 հազար ձայն ստանար. չի՛ եկել, ա՛յդ է ընդդիմության դեմքն ու վարկանիշը, ու մենք սխալվեցինք (մարդն առհասարակ սխալական է), երբ մտածում էինք, թե Նիկոլի պարագան ուրիշ է եւ տարբեր՝ մնացած ընդդիմության պարագայից, եւ անկախ նրանից համակրո՞ւմ էր Կենտրոնի բնակիչն ընդդիմությանը, թե ոչ, միտի ուզենար Նիկոլին պատգամավոր դարձնելով գոնե միառժամանակ անձեռնմխելի դարձնել դատական գործընթացների էս թեժ ընթացքին: Սակայն, չէ, մեր ընտրողն ընդհանրապես զզված է, եւ դրանում բավական ներդրում ունեն ե՛ւ մեր ընդդիմադիր, ե՛ւ իշխանական կորիֆեյները, այնպես որ հիասթափեցրել են մեր «ձայն»ավորներին:

Տես էջ 2

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ ՍԴ-ն այսօր կքննարկի հայ-թուրքական արձանագրությունների սահմանադրականության հարցը

ՀՀ Սահմանադրական դատարանը հունվարի 12-ին՝ ժամը 11:00-ին, կքննարկի հայ-թուրքական արձանագրությունների սահմանադրականության հարցը: Այս մասին «Արմենպրես»-ին հայտնել է ՍԴ մամուլի քարտուղար Հովհաննես Պապիկյանը: Հարցի զեկուցողն է լինելու ՍԴ անդամ Վլադիմիր Հովհաննիսյանը: Ցյուրիխում 2009-ի հոկտեմբերի 10-ին ստորագրվել են «Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին» ու «Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ երկկողմ հարաբերությունների զարգացման մասին» արձանագրությունները: Դրանք ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը Սահմանադրական դատարան էր ներկայացրել նոյեմբերի 19-ին: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 72 հոդվածի համաձայն՝ դատաքննությունն իրականացվում է գրավոր ընթացակարգով: Սահմանադրական դատարանի պատճառաբանված որոշմամբ գործի դատաքննությունը կարող է իրականացվել բանավոր ընթացակարգով: Սույն հոդվածում նշված գործերով Սահմանադրական դատարանը որոշում է ընդունում դիմումը մուտքագրելուց հետո երեք ամսվա ընթացքում: Սահմանադրական դատարանը կարող է ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունները սահմանադրությանն ամբողջությամբ կամ մասամբ չհամապատասխանող ճանաչելու որոշումները:

Ն. Մ.

«Երազով»՝ Նախիջեւան

Հայաստանի քաղաքացի, 1958-ին ծնված Եղիշե Պետրոսի Գեւորգյանը հունվարի 10-ին, ժամը 19-ին հանկարծ որոշել է «Երազ» մեքենայով մեկնել... Նախիջեւան: Գեւորգյանը իր հետ վերցրել է նաեւ կնոջը եւ երեք անչափահաս երեխաներին (7, 6 եւ 3 տարեկան): Արկածախնդիր Եղիշեն անհետել է հայ սահմանապահների նախազգուշական հրահանգները եւ մտել է Նախիջեւան: Ադրբեջանցի սահմանապահներն անմիջապես կրակ են բացել հայկական «Երազ»-ի ուղղությամբ, սակայն դա չի խանգարել վերջինիս ներթափանցել Նախիջեւան:

Դեպքի մասին տեղեկացվել են միջազգային համապատասխան կազմակերպությունները: Նախկինում կողոպուտի, ավտոմեքենաների գողության համար ութ անգամ դատապարտված Եղիշե Գեւորգյանի նկատմամբ հարուցվել է քրեական գործ, կատարվում է հետաքննություն:

Հ. Ա.

Լավրովը՝ Երեւանում

Հունվարի 13-14-ը Երեւանում կլինի Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը: Այս տեղեկությունը հաստատել է Հայաստանի ԱԳՆ մամլո քարտուղար **Տիգրան Բալայանը**: Լավրովը Երեւանում հանդիպումներ կունենա իր հայաստանցի գործընկեր Էդվարդ Նալբանդյանի եւ նախագահ Սերժ Սարգսյանի հետ: Հանդիպումների օրակարգն առայժմ ճշգրտված չէ:

Քննարկվելիք հարցերը թեեւ ճշգրտված չեն, սակայն հստակ երեւում է, որ ՌԴ արտաքին գերատեսչության ղեկավարը Հայաստանում այլ հարցերի հետ մեկտեղ քննարկելու է նաեւ հայ-թուրքական հարաբերությունները, մանավանդ հաշվի առնելով, որ գրեթե նույն ժամանակ՝ հունվարի 12-ին, Ռուսաստանի վարչապետ Պուտինի հրավերով Մոսկվայում է լինելու Թուրքիայի վարչապետ Էրդողանը: Ի դեպ, Էրդողանն արդեն հայտարարել է, որ դիմելու է Մոսկվային, որպեսզի վերջինս ճնշում գործադրի Հայաստանի վրա՝ Ղարաբաղի հարցում:

Հ. Ա.

Վարչապետ Էրդողանը Մոսկվայում

Այսօր երկօրյա պաշտոնական այցով Մոսկվա կուղեւորվի Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը: ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինի հետ նրա հանդիպմանը, ինչպես թուրքական հանրային հեռուստատեսությունն է նախատեսում, քննարկվելու են Թուրքիայում Ռուսաստանի մասնակցությամբ ատոմային էլեկտրակայանի կառուցմանը, «Կապույտ հոսքին», ՆԱԲՈՒԿՈ նախագծին, Սամսուն-Ջեյհան նախագծին, ինչպես նաեւ Կովկասում խաղաղության ապահովմանն առնչվող հարցեր:

Ենթադրվում է, որ Թուրքիայի վարչապետը ռուս պաշտոնակցի հետ կանդրադառնա «Կովկասում կայունության եւ խաղաղության պլատֆորմի» ստեղծման իր իսկ առաջարկը վերսին շրջանառության մեջ դնելու հնարավորություններին եւ Մոսկվայից կպահանջի Լեռնային Ղարաբաղի հիմնահարցում ավելի ակտիվ դերակատարության ստանձնում:

Ըստ «Սթար» թերթի, ԽՍՀՄ-ի աշխարհագրության հետազոտության կենտրոնի գլխավոր տնօրեն Ալեքսեյ Վլասովը «Ջիհան» գործակալությանը տված հարցազրույցում ասել է. «Առանց հաշվի առնելու Բրյուսելին եւ Վաշինգտոնին, ենթադրել, որ Ռուսաստանը եւ Թուրքիան կկարողանան Կովկասում կայունություն ապահովել կամ լուծում տալ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին, չափազանցություն կլինի: Թուրքիայի երկակի բանակցությունները նրա համար դժվարացնում են դիրքորոշման որդեգրումը: Նա մի կողմից սկզբնավորում է Հայաստանի հետ ստորագրված արձանագրությունների վավերացման գործընթացը, իսկ մյուս՝ հետամուտ է լինում Ադրբեջանի հետ հարաբերություններին եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը: Մոսկվան այս հարցում կարող է լուրջ աջակցություն ցուցաբերել Անկարային: 2010-ին կարող ենք լինել Հայաստանի օկուպացրած 5 շրջանի Ադրբեջանին հանձնման ականատեսը: Այդ դեպքում արդեն կարագանա տարածաշրջանում խաղաղության հաստատման գործընթացը եւ կբացվի հայ-թուրքական սահմանը»:**

Հ. Ջ.

Հիլարի Քլինթոնը կհանդիպի ամերիկահայերին

Ամերիկայի հայկական համագումարը տեղակացնում է, որ փետրվարին ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը կհանդիպի ամերիկահայերի հետ: Հանդիպման ընթացքում շոշափվելու են հայ-թուրքական հարաբերություններն ու նրանց հետագա զարգացումները: Համագումարի տնօրեն Բրայան Արդունիի խոսքերով՝ ԱՄՆ պետքարտուղարի հետ հանդիպումը շատ կարեւոր է հատկապես այն առումով, որ Թուրքիան շարունակում է հերքել Հայոց ցեղասպանության փաստը, եւ Հայկական համագումարը, հայկական լոբբին ընդհանրապես, պետք է ամեն ինչ անեն, որպեսզի ԱՄՆ Կոնգրեսը վերջապես ընդունի եւ դատապարտի հայերի ցեղասպանությունը: «Բացի այդ, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը իր համարձակ քայլերով մեծ աշխատանք է տանում բարելավելու հարաբերությունները Թուրքիայի հետ, այնինչ թուրքերը կարծես փորձում են տապալել գործընթացը: Այս ամենից ելնելով՝ տիկին Քլինթոնի հետ հանդիպման ընթացքում մենք կփորձենք քննարկել ԱՄՆ իշխանությունների վերաբերմունքն այս հարցերին, ինչպես նաեւ սպիտել Թուրքիային լինել ավելի պատասխանատու», հայտարարել է Արդունին:

Քլինթոնի հետ հանդիպման հրավեր են ստացել Հայկական համագումարի, Հայկական բարեգործական ընդհանուր միության ներկայացուցիչներ, Հայ առաքելական եկեղեցու ԱՄՆ արեւելյան եւ արեւմտյան թեմերի անդամներ, հայկական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հ. Ա.

ԳՈՒՅԺ

Քաղեմ Սարգսյան

Հունվարի 10-ին 87 տարեկանում մահացավ պետական ականավոր գործիչ, հաշվողական տեխնիկայի եւ կառավարման ավտոմատացված համակարգերի բնագավառի մեծ մասնագետ, ակադեմիկոս Քաղեմ Տաճատի Սարգսյանը: Որպես խորհրդային Հայաստանի Մինիստրների սովետի նախագահ (վարչապետ) նա մեծ դեր է ունեցել մեր հանրապետությունում վերոհիշյալ բնագավառի զարգացման, համապատասխան մասնագետների պատրաստման, բազային մի ամբողջ շարք հիմնարկների ստեղծման գործում: Քաղեմ Տաճատիչը (շրջապատում այսպես էին սիրում նրան կոչել) իր կազմակերպական գործունեությունը շարունակել է նաեւ Հայաստանի անկախ պետականության պայմաններում, ավելի քան մեկ տասնամյակ գլխավորելով Գիտությունների ազգային ակադեմիան:

Պետական նշանավոր գործչի եւ գիտնականի մահվան կապակցությամբ հանգուցյալի հարազատներին եւ գործընկերներին ցավակցական ուղերձ են հղել ՀՀ նախագահը, կառավարությունը, ԳԱԱ-ի նախագահությունը, Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանը եւ ուրիշներ: Վարչապետ Տիգրան Սարգսյանի նախագահությամբ ստեղծվել է կառավարական հանձնաժողով, որի որոշմամբ հանգուցյալի քաղաքային հոգեհանգիստը կկայանա այսօր՝ հունվարի 12-ին, ժամը 17:00-ին, Յա. Զարոբյան 10/1 հասցեում, իսկ վերջին հրաժեշտի արարողությունը՝ հունվարի 13-ին, ժամը 12-ից Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը, իսկ հուղարկավորությունը՝ ժամը 14:00-ին, Երեւանի քաղաքային գերեզմանոցի պանթեոնում:

AZG NEW PDF.qxd 1/11/2010 11:01 PM Page 1

Նոյեմբերին՝ անշարժ գույքի գների աճ

Սկսեցին աճել նաեւ անհատական տների գները

2009-ի նոյեմբերին, անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ շուկայի վերլուծության տվյալների համաձայն, Հայաստանի անշարժ գույքի շուկայում իրականացվել է 15674 գործարք, ինչը 2,6 տոկոսով բարձր է 2009-ի հոկտեմբերին կատարված գործարքների եւ 24,6 տոկոսով՝ 2008-ի նոյեմբերի գործարքների համեմատ: Միայն օտարման գործարքների քանակը նոյեմբերին հոկտեմբերի համեմատ աճել է 0,5 տոկոսով, իսկ անցյալ տարվա նոյեմբերի համեմատ նվազել՝ 9,1 տոկոսով: 4067 օտարման գործարքներից առուվաճառքներինը կազմել է 8189 տոկոսը: Մնացածը նվիրատվություններն ու փոխանակություններն են: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 35,1 տոկոսն արձանագրվել է Երեւան քաղաքում:

Մայրաքաղաքում առուվաճառքի գործարքների 64,3 տոկոսն արձանագրվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ: 2009-ի հոկտեմբերի համեմատ, բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում նոյեմբերին նվազել է 20,8 տոկոսով, իսկ նախորդ տարվա նոյեմբերի համեմատ աճել՝ 37,3 տոկոսով:

Բնակարանների շուկայական միջին գները Երեւանում նոյեմբերին հոկտեմբերի համեմատ աճել են՝ 1,9 տոկոսով: Ըստ վարչական շրջանների, Երեւանում բնակարանների 1 քմ մակերեսի միջին շուկայական գները նոյեմբերին այսպիսին են եղել.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	նոյեմբեր 2008թ.	նոյեմբեր 2009թ.	հոկտեմբեր 2009թ.
Կենտրոն	495400	465600	461700
Արաբկիր	400400	366800	360100
Քանաքեռ-Զեյթուն	310000	277500	270400
Նոր Նորք	269100	227600	221800
Ավան	276900	229400	228100
Էրեբունի	271600	241100	235700
Շենգավիթ	278300	241800	235800
Դավթաշեն	299300	261300	253700
Աջափնյակ	265500	230700	226000
Մալաթիա-Սեբաստիա	259000	230100	222800
Նուբարաշեն	167900	142200	143300
Միջինը Երեւանում (բացի Նորք-Մարաշից)	299400	264900	259900

Մարզերում, բացառությամբ Երեւանի, նոյեմբերին վաճառվել են 343 բնակարաններ, որոնց քանակը հոկտեմբերի համեմատ նվազել է 8,8 տոկոսով, իսկ 2008-ի նոյեմբերի համեմատ աճել՝ 10,7 տոկոսով: Միաժամանակ, արձանագրվել է նաեւ միջին գների փոքր աճ հոկտեմբերի համեմատ՝ 0,3 տոկոսով:

Երեւանից հետո ամենաթանկ բնակարանները նոյեմբերին եղել են Ծաղկաձորում, որտեղ 1 քմ մակերեսի շուկայական գինը կազմել է ավելի քան 181 հազար դրամ: Վաղարշապատում (Էջմիածնում) 1 քմ գինը կազմել է 156 հազար դրամ: Ապա գալիս են Աբովյանը՝ 150 հազար հազար դրամ, Գորիսը՝ 139 հազար դրամ, Աշտարակը՝ 135 հազար դրամ, Իջեւանը՝ 132 հազար դրամ, Նոր Հաճընը՝ 128 հազար դրամ 1 քմ դիմաց ցուցանիշներով:

Նոյեմբերին Հայաստանում գրանցվել է անհատական տների առուվաճառքի 448 գործարք, որից 152-ը՝ Երեւանում: Մայրաքաղաքում անհատական տների առուվաճառքի գործարքների քանակը հոկտեմբերի համեմատ նվազել է 3,2 տոկոսով, իսկ մարզերում աճել՝ 2,4 տոկոսով: 2008-ի նոյեմբերի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում աճել է 94,9 տոկոսով, իսկ մարզերում՝ միասին վերցրած նվազել 5,4 տոկոսով: Միջինացված՝ 250 քմ շինության մակերես եւ 400 քմ տնամերձ ունեցող անհատական տների 1 քմ-ի միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2009-ի նոյեմբերին հոկտեմբերի համեմատ աճել են 1,1 տոկոսով: Ըստ Երեւանի վարչական շրջանների, գներն այսպիսին են եղել.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	նոյեմբեր 2008թ.	նոյեմբեր 2009թ.	հոկտեմբեր 2009թ.
Կենտրոն	510000	471300	468000
Արաբկիր	438400	371500	367000
Քանաքեռ-Զեյթուն	325700	280200	275400
Նորք-Մարաշ	313700	279500	277800
Ավան	291000	234300	234500
Էրեբունի	291000	244200	242000
Շենգավիթ	293800	243800	241000
Դավթաշեն	324500	264600	259000
Աջափնյակ	302200	234400	232000
Մալաթիա-Սեբաստիա	295300	233000	228200
Նուբարաշեն	172300	147100	146800
Միջինը Երեւանում (բացի Նոր Նորքից)	323400	273100	270200

Մարզերում միջինացված են 200 քմ շինության եւ 1000 քմ տնամերձ մակերեսով անհատական տների գները: Այստեղ միջին գները նոյեմբերին հոկտեմբերի համեմատ աճել են 1 տոկոսով: Ամենաթանկ անհատական տները Երեւանից հետո դարձյալ Ծաղկաձորում են, 1 քմ-ն՝ 296 հազար դրամ: Երկրորդը Վաղարշապատն է, 1 քմ-ն՝ 164 հազար դրամ, երրորդը՝ Աբովյանը, որտեղ 1 քմ-ն կազմել է 153 հազար դրամ: Ապա գալիս են Աշտարակը՝ 141 հազար դրամ, Գորիսը 140 հազար դրամ, Նոր Հաճընը՝ 136 հազար դրամ, Իջեւանը՝ 132 հազար դրամ, Եղվարդը՝ 127 հազար դրամ 1 քմ դիմաց:

Հողի շուկայում հետեւյալ պատկերն է՝ 2009-ի նոյեմբերին 2008-ի նոյեմբերի համեմատ հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 14,3 տոկոսով, աճուրդով վաճառքներինը՝ 4 տոկոսով: Ընդ որում, Երեւանում հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 28,6 տոկոսով:

Անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նոյեմբերին կազմել է 1053: Հոկտեմբերի համեմատ այդ ցուցանիշը նվազել է 11,9 տոկոսով, իսկ 2008-ի նոյեմբերի համեմատ աճել 9,7 տոկոսով:

2009-ի նոյեմբերին անշարժ գույքի 2050 գրավադրման գործարքներից 156-ը եղել են հիպոթեկային գրավադրման գործարքներ, որից 129 Երեւանում: Հիպոթեկային գրավադրման գործարքների 83,3 տոկոսն իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 10,3 տոկոսն՝ անհատական բնակելի տների, մնացածը՝ հասարակական նշանակության օբյեկտների, այգեշնակների եւ հողերի նկատմամբ: 2009-ի հոկտեմբերի համեմատ, հիպոթեկային գրավադրման գործարքների քանակը նոյեմբերին աճել է 4,7 տոկոսով, ընդ որում, Երեւանում՝ 6,6 տոկոսով, մարզերում նվազել է 3,6 տոկոսով: 2008-ի նոյեմբերի համեմատ հիպոթեկային գործարքներն աճել են 90,2 տոկոսով, ընդ որում, Երեւանում՝ 2,1 անգամ, մարզերում՝ 35 տոկոսով:

Փաստորեն, նոյեմբերին անշարժ գույքի շուկայում գների կայունացմանը 5 ամիս շարունակվող միտումին հաջորդեց աճը: Բնակարանների առումով գների աճը շարունակվեց, իսկ անհատական տների գների աճը սկսվեց: Իհարկե, դեռ վաղ է արձանագրված գների աճի ցուցանիշը միտում համարել, սակայն ակնհայտ է, որ ճգնաժամն ու գների մոտ 30 տոկոսով անկումը Հայաստանի անշարժ գույքի շուկան արդեն հաղթահարել է:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ժպտացող եւ չժպտացող Երեւան

«Երազում էի Նոր տարի դիմավորել հայրենիքում, սակայն ինչ-ինչ պատճառներ խոչընդոտում էին միշտ: Սկզբում ծնողներս չէին գալիս Հայաստան, իսկ ես փոքր էի մենակ գալու համար, հետո արդեն՝ դասեր, քննություններ, գործեր, ու չէր ստացվում գալս: Բայց այս տարի ժամանակ գտա», **«Ազգին»** պատմեց Սանկտ Պետերբուրգում բնակվող **Արմանը:**

Արմանը Երեւան է եկել դեկտեմբերի 29-ին՝ Նոր տարին հայրենիքում դիմավորելու համար. «Եկել եմ առանց ծնողների, մենակ, ուզում էի տեսնել ու զգալ՝ ինչպես են հայերը նշում Ամանորը, ի՞նչ է կատարվում այդ օրերին Երեւանում»: Իսկ Երեւանում, Արմանի խոսքերով, Ամանորին ոչինչ չի կատարվում. «Խոսքս ռեստորաններում, ակումբներում անցկացվող միջոցառումների մասին չէ, խոսքս փողոցի մասին է, սովորական մարդկային ուրախության: Հատկապես մինչեւ դեկտեմբերի 31-ը փողոցներում «վայրագ» առեւտրից, խառնաբփոթից բացի ոչինչ չէի տեսնում, մարդիկ չէին ժպտում. նրանք ասես պարտադրված լինեին գնումներ (երբեմն նույնիսկ աննորմալ գնումների): Ես գիտեի, որ Երեւանի փողոցներում մարդիկ հազվադեպ են ժպտում, բայց որ չեն ժպտում նաեւ Ամանորին. սա տարօրինակ է՝ տարօրինակ վաս»:

«Իսկ Ռուսաստանում մարդիկ հաճա՞խ են ժպտում» հարցիս Արմանը պատասխանեց. «Ռուսաստանն էլ «Եվրոպա» չէ, բայց, օրինակ, երեկ փողոցում նկատեցի մի խումբ ծիծաղող աղջիկների, նրանցից մեկը անչափ հմայիչ էր, որոշեցի մոտենալ եւ ծանոթանալ: Երբ մոտեցա, աղջիկների դեմքից ժպիտը անմիջապես անհետացավ, նրանք նույնիսկ չէին նայում ինձ, ուր մնաց՝ խոսեին հետս: Հետո միանգամից բոլորը հեռացան՝ թողնելով ինձ մենակ: Խոսքս ահա այս ժպիտի մասին է, երբ անծանոթը կարող է, ավելին, պետք է ժպտա անծանոթին, եթե, իհարկե, վերջինս պարզապես սիրալիր դիմում է նրան: Հավաստիացնում եմ, նման բան Պետերբուրգում հնարավոր չէ. աղջիկները մինչեւ հեռանալը գոնե կխոսեին ինձ հետ»:

Արմանը հիշեցրեց նաեւ մեր «ժպտերես» վաճառող-վաճառողուհիների մասին, որոնք երբեմն նույնիսկ «մոռանում» են պատասխանել հաճախորդի՝ «Շնորհավոր Նոր տարի» մաղթանքին, ուր մնաց՝ իրենք առաջինն ասեն: Նա նաեւ նշեց, որ Նոր տարվա առաջին օրերին Երեւանի փողոցներում ինքը չտեսավ ոչ մի միջոցառում (իհարկե, ո՞վ «հավես» ունի նման բան կազմակերպելու): «Ներողություն անընդհատ համեմատությունների համար, բայց Պետերբուրգում ամեն քայլափոխի կարելի է տեսնել մարդկանց՝ նույնիսկ պարող խմբեր, ընդ որում՝ կենդանի երաժշտությամբ, իսկ Երեւանում «գմփուցիկներ» են, տարօրինակ գոռգոռոցով հարբած կամ հարբած ձեւացող երիտասարդներ, որոնք կամ «ընկած» են կողքի աղջկա վրա, կամ էլ նրա թեւից քաշում են իրենց հետեւից: Այո, Պետերբուրգում նույնպես կարելի է տեսնել սա, սակայն Երեւանում ես միայն սա տեսա», շեշտեց Արմանը:

Իսկ հաճույք եւ բերկրանք հայկական Ամանորից Արմանը ստացել է միայն հյուրընկալվելով հարազատների ու ծանոթների տները. «Այստեղ ժպիտը, հետաքրքրությունն անպակաս էին: Բոլոր տներում, որ եղա, ուրախությունը, ծիծաղը անսպառ էին. սա է՝ հանուն ինչի չեմ զղջացել գալուս համար, իրոք ճիշտ են ասում, ամեն հայ տուն մի ուրախ ու երջանիկ «երկիր» է, սակայն ցավալին այն է, որ այդ «ուրախ երկրներն» ապրում են անժամանակ ընդհանուր երկրում», եզրափակեց Արմանը:

Սուրբ Ծննդից հետո Արմանը մեկնեց Պետերբուրգ, որտեղ նրան սպասում են ուրախ փողոցներն ու ժպտացող աղջիկները, ինչպես նաեւ նրա ծնողները, որոնք, երիտասարդի խոսքերով, միշտ իրեն պատմում էին երբեմնի Երեւանի փողոցների Ամանորի մասին, երբ չկային «գմփուցիկների» պայթյուններ, ու նույնիսկ «երազն էր կորում այդ գիշերներում»:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

Հ. Գ. Արդեն օդանավից Արմանը զանգահարեց ինձ ու ասաց. «Երբ հյութ էի խնդրում ուղեկցորդուհուց, նա ժպտալով ասաց, որ հիմա կբերի: Ջես հավատա, բայց այդ ժպտացող ուղեկցորդուհին հայ էր»:

Քաղաքական ռեսուրս կա՞, ...

1-ին էջից

Եվ ինչքան էլ Դավիթ Հակոբյանը (մարքսիստ), հումանոիդ ու էլ եսիմ ինչ անվանի իր մրցակցին, նրա (Դավիթ Հակոբյանի) ընտրողը ամենաշատը 300 հոգի է, ու վերջ: Եվ որքան էլ ընդդիմադիր թեկնածուի կողմնակիցներն ասեն, թե դատական բոլոր այցաններով բողոքարկելու են ընտրությունների արդյունքները՝ եթե անգամ 10 անգամ նոր ընտրություն նշանակվի, Նիկոլին ընտրած 5 հազարը 10 հազար չի դառնա, այս է մեր ընդդիմադիրների երկարատեւ պայքարի հանրագումարը, ինչը ծնել է Արա Սիմոնյան:

Իսկ ընդհանրապես՝ ընտրություններին մասնակցել է 13 հազար 380 ընտրող, կամ ընտրողների 24 տոկոսից մի փոքր ավելին: Սա հիասթափված ընտրազանգվածի ցուցիչն է. հիասթափություն ընդհանրապես մեր քաղաքական դաշտի նկարագրից, հիասթափություն՝ իրենց ձայնը գործոն դարձնել չկարողանալուց, երկրի հասարակական կյանքին մասնակցության բոյկոտման ձեւ, եթե կուզեք՝ մեր քաղաքական շրջանակներին բոյկոտելու ձեւ:

Իսկ թեման, թե խախտումները բողոքարկելով կարելի է չեղյալ հայտարարել ընտրությունները, լուրջ չէ. չէ, չեմ ասում ընտրախախտում իրականացնողները պետք է անպատիժ մնան, չեմ ուզում, որ չորրորդ դասարանի կրթությամբ «հեղինակություններն» անվերջ վճռեն հազարների ճակատագիրը, չեմ ուզում այս անշարժությունն ու ճահիճը «ընտրություններ» անվանյալ հայկական ֆարսում: Չէ, դրանք բոլորն առանձին խոսակցության թեմա են, այլ ընդամենն ասում եմ. ուզում ես տասը ընտրություն նշանակի՝ նույն թվով մարդիկ են գալու եւ ընտրելու Նիկոլին, Դավթին: Ու հարցն այստեղ ոչ թե այն փաստն է, որ Հայաստանում «ընտրություն» բառն ընդհանրապես արժեզրկվել է: Դա կա: Բայց այստեղ խոսքն այն բանի մասին է, ինչը չեն ուզում տեսնել մեր քաղաքական դաշտի ընդդիմադիր հատվածում. ընդդիմության քաղաքական ռեսուրսն այդքան է՝ այդ 5 հազարը, տոկոսային անբավարար վերկոտ: Քաղաքական մեծ ռեսուրսը սովորաբար մեծ ընտրազանգված է ենթադրում, որը հակադարձ համեմատական է ամեն ընտրակեղծիքի:

ԱՐՏԱԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԳՈՒՅԺ

Գեղամ Կիրակոսյան



Կյանքի 79-րդ տարում, երկարատեւ հիվանդությունից հետո մահացավ պատմաբան, խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի բազմամյա դասախոս, դոկտ., պրոֆ. Գեղամ Կիրակոսյանը: Հարգված մանկավարժ-դասախոսը մի տեւական շրջան եղել է վերոհիշյալ համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան, միշտ շարունակելով իր պատմագիտական հետազոտությունները, որոնք լույս են տեսել շուրջ մեկ տասնյակ մենագրություններում եւ 60-ից ավելի հոդվածներում: Նրա «Հողի եւ արյան կանչով», «Երկիրն է կանչում» հատորները մեծ հետաքրքրություն են առաջացրել ընթերցողական շրջանակներում իրենց էքզակտորոս էությամբ: Նույն բնույթի հոդվածներով Գեղամ Կիրակոսյանը հանդես է եկել նաեւ «Ազգի» էջերում:

Ցավակցություններ ենք հայտնում դստերը՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետ տիկին Կարինե Կիրակոսյանին եւ մյուս բոլոր հարազատներին:

Հուղարկավորությունը տեղի կունենա այսօր, ժամը 14.00-ին, հայրենի Աշնակ գյուղում:

Ցավակցություն

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմը ցավակցում է վարչության պետ Կարինե Կիրակոսյանին սիրելի հոր՝

ԳԵՂԱՄ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ

մահվան կապակցությամբ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 1/11/2010 10:16 PM Page 1

Ղարաբաղյան հարցում անցյալ տարի ձեռքբերումներ կամ ձախողումներ չեն եղել

Դեկտեմբերի վերջին ԼՂՀ վարչապետ **Արա Հարությունյանը** հրավիրել էր մամուլի ասուլիս՝ լրագրողներին ներկայացնելու անցնող տարվա արդյունքներն ու խոսելու 2010-ին ծրագրված սոցիալ-տնտեսական խնդիրներից:

Ասուլիսը հաջորդել էր նույն օրը տեղի ունեցած Ազգային Ժողովի արտահերթ լիագումար նիստին, որտեղ երկրորդ ընթերցմամբ օրենքի ուժ էր ստացել հաջորդ տարվա պետբյուջեն: Վարչապետը գոհունակություն հայտնեց 2009-ի տնտեսական արդյունքների առթիվ, նշելով, որ այն նշանակալից էր ոչ միայն եկամուտների ու ծախսերի ճիշտ հաշվարկման ու կատարման առումով, այլեւ հրաշալի նախադրյալ է ստեղծված 2010-ին երկրի զարգացման ավելի բարձր մակարդակ ապահովելու համար:

Հակիրճ նախաբանից հետո վարչապետը պատասխանեց լրագրողների տարաբնույթ հարցերին: Մասնավորապես, ԶԼՄ ներկայացուցիչներին հետաքրքրում էր, թե նոր տարում կառավարությունը վերաբնակեցման խաղաքաղաքականության մեջ ինչ թարմացումներ է նախատեսել: Ճշտում կատարելով ձեւակերպման մեջ, վարչապետն ասաց, որ գործադիր իշխանության ուղեգիծը խարսխվում է ոչ թե վերաբնակեցման, այլ զարգացման խաղաքաղաքականության մեջ: Պարզաբանելով հիշյալ դրույթը, Արա Հարությունյանը նշեց, որ տարիներ շարունակ այս ուղղությամբ իրականացված միջոցառումները ցանկալի արդյունք չեն տվել, որովհետեւ տվյալ տարածքում ապրողների համար զարգացման ծրագրեր չեն կազմվել: Այս համատեքստում նա առանձնացրեց էներգետիկ, ճանապարհաշինական, ենթակառուցվածքների զարգացմանն առնչվող խնդիրները, շեշտելով, որ դրանց լուծումից հետո միայն կարելի է անցնել սոցիալ-կենցաղային խնդիրների լուծմանը:

Լրագրողները հարց ուղղեցին Արցախում երկրորդ բջջային օպերատորի ներգրավման հավանականության վերաբերյալ՝ նկատի առնելով, որ «Ղարաբաղ Տելեկոմի» բջջային ծառայությունների սակագներն անհամեմատ բարձր են: Կապված ԼՂՀ բարդ ռելիեֆի հետ, ըստ վարչապետի, դա մի փիչ բարդ հարց է, քանի որ հանրապետության տարածքի եւ բնակչության ծավալները համարժեք չեն: Բանակցություններ են տարվում սակագների հնարավոր իջեցման ուղղությամբ, ինչ մնում է նոր բջջային օպերատորի մուտք գործելուն, ապա, նրա կարծիքով,առկա պայմաններում հազիվ թե դա կարող է երկրորդ օպերատորի համար շահութաբեր լինել:

Ինչքանո՞վ է ազդել համաշխարհային տնտեսական ճգնաժամը ԼՂՀ-ի վրա: Այս հարցին պատասխանելով, վարչապետը նշեց, որ բնակչության վրա զգալի չի եղել, քանի որ նախատեսված բոլոր սոցիալական ծրագրերն էլ հաջողությամբ իրականացվել են: Միեւնույն ժամանակ, կառավարությունը ճգնաժամի ազդեցությունը շոշափելիորեն զգացել է, եւ հույս հայտնեց, որ նոր տարում դրա հետեւանքները համեմատաբար կմեղմանան:

Գնահատելով նոյեմբերին կայացած համազգային դրամահավաքի արդյունքները, վարչապետը նշեց, որ ինքը գոհ է մնացել դրամահավաքից, եւ չի ընդունում այն տեսակետը, թե «Հեռուստամարաթոն-2009» ձախողվել է: Ամենակարեւորը, ասաց Արա Հարությունյանը, այն է, որ տարեցտարի հանգանակության մասնակիցների թիվն ավելանում է, ինչը վկայում է հիմնադրամի նոր ղեկավարության լավ աշխատանքի մասին:

Ո՞րն է 2009-ի ամենամեծ ձեռքբերումը: Հարցին ի պատասխան վարչապետը նշեց ժողովրդագրական աճը եւ շինարարության աննախադեպ ծավալները ԼՂՀ-ում: Մասնավորապես, ըստ Արա Հարությունյանի, անցյալ տարի շուրջ 100 միլիոն դոլարի շինարարական աշխատանքներ են իրականացվել հանրապետությունում, եւ այդ տեմպերը շարունակվելու են նաեւ նոր տարում: Իսկ ձախողում արձանագրվել է գյուղատնտեսության բնագավառում, տեղեկացրեց գործադիրի ղեկավարը, որն առավելապես ֆրուժաժորներով կարելի է բացատրել:

Արդյո՞ք հունվարի 1-ից էլեկտրաէներգիայի եւ ջրի սակագներն Արցախում կբարձրանան. հետաքրքրվեցին լրագրողները:

Եթե դոլարի տատանումները ցցուն չլինեն, ապա էլեկտրաէներգիան չի թանկանա, հավատիացրեց վարչապետը, իսկ ահա ջրի սակագինը կփոխվի: Որպեսզի կարողանանք շուրջօրյա ջուր ապահովել, ասենք, Ստեփանակերտում՝ պետք է օգտագործվող ջրի համար ռեալ գին վճարել, մինչդեռ այստեղ գործող սակագինը ցածր է, եւ դա խոչընդոտում է ճյուղի զարգացմանը:

«Ազգի» թղթակիցը, հիշեցնելով նախորդ տարեվերջին վարչապետի արտահայտած այն միտքը, թե կառավարության գործունեությանը շատ բանով կարող է նպաստել համայնքների ակտիվացումը, փորձեց իմանալ՝ արդյո՞ք համայնքների աշխատանքում ակնկալվող ակտիվացումն առկա էր 2009-ին: Առաջընթաց կա, հավատիացրեց գործադիր իշխանության ղեկավարը, բայց դրանով բավարարվել չի կարելի: Ամենածանր խնդիրն այս բնագավառում փոքրաթիվ համայնքների առկայությունն է եւ համայնքային ընտրությունների ժամանակ դեռեւս նկատվող՝ լարված հարաբերությունները թեկնածուների միջեւ, ինչը բացասաբար է անդրադառնում համայնքի հետագա գործունեության վրա:

«Ազգի» հաջորդ հարցը հետեւյալն էր՝ ո՞րն է վարչապետի մոտեցումը պետական կառավարման մարմիններում հաստիքների ուռճացվածության փաստին: Ուռճացվածություն իրոք կա, չժխտեց Արա Հարությունյանը, եւ պետք է ճիշտ խաղաքաղաքականություն տանել այդ ուղղությամբ, քանզի անհրաժեշտ կրճատումները մյուս կողմից կարող են դժվար վիճակ ստեղծել աշխատանքի շուկայում: Խնդրի լուծման նպատակալաց ուղին վարկային ճիշտ խաղաքաղաքականությունն է, որը կառավարության կարեւորագույն ծրագրերից մեկն է:

Պատասխանելով դարաբաղյան կարգավորման վերաբերյալ հարցին, վարչապետը նշեց, որ իր գնահատմամբ՝ այս բնագավառում 2009 թվականին ձեռքբերումներ կամ ձախողումներ չեն եղել: Նա վերահաստատեց այն համոզմունքը, որ առանց ԼՂՀ ժողովրդի կամքը հաշվի առնելու՝ դարաբաղյան հակամարտությունը տրամաբանական լուծում չի ունենա:

ԿԻՄ ՂԱԲԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

Դաշնակցությունը կպայքարի նաեւ Ազգային ժողովում

Մինչ այդ պիկետներ կլինեն Սահմանադրական դատարանի մոտ

Այսօր առավոտյան ժամը 10-ից Սահմանադրական դատարանի մոտ կմեկնարկի Հայ հեղափոխական դաշնակցության կազմակերպած պիկետն ընդդեմ հայ-թուրքական արձանագրությունների, որը կշարունակվի այնքան ժամանակ, մինչեւ, ըստ Հայր Կարապետյանի, չլսեն իրենց համար ցանկալի արտահայտությունները: Երեկ մոտ 3000 մարդու մասնակցությամբ Շահումյանի հրապարակից սկսվեց Դաշնակցության հանրահավաքը՝ «ՈՉ» ասելու հայ-թուրքական արձանագրություններին: ՀՅԴ գերագույն մարմնի ներկայացուցիչ Արմեն Ռուսամյանը ելույթի ժամանակ կարծիք հայտնեց, որ Հայաստանի հայության մեծ մասը դեռեւս չի գիտակցում արձանագրությունների հակահայկական լինելն ու չի զգում վտանգները:

Ռուսամյանը նկատում է, որ գործընթացը սկսվել է փակ, գաղտնի. դա են վկայում հայտարարությունների, ստորագրությունների գիշերային հրապարակումները: «Այն գիշերային աղջամուղջի եւ մթության մեջ պարուրված գործընթաց է: Ուրեմն միակ ճանապարհը մնում է, որ Սահմանադրական դատարանը կասեցնի գործընթացը, արձանագրությունները հետ ուղարկի, որպեսզի նախագահը վերապահումներ անի եւ նորից սկսի գործընթացը: Բոլոր ճանապարհները ցույց ենք տալիս իշխանություններին: Եթե ՍԴ-ն չանսաց այս ամենին, ճանաչեց սահմանադրությանը համապատասխանող, մեր պայքարը կտեղափոխվի ԱԺ: Ամեն ինչ կանենք Ազգային ժողովում հասնելու նրան, որ պատգամավորները դեմ քվեարկեն այդ արձանագրություններին առանց վերապահումների ու փոփոխությունների»:

Ռուսամյանը տեղեկացրեց, որ Դաշնակցության կազմակերպած ընդդեմ արձանագրությունների ստորագրահավաքին մասնակցել է 70.000 մարդ: «Բայց դա շատ քիչ է, մենք պարտավոր ենք այս գործընթացը շարունակել, որպեսզի դա կարողանանք օգտագործել ԱԺ-ում, որ պատգամավորները գոնե մի օր քվեարկեն որպես հայ մարդ, ոչ թե որպես Հանրապետական, «Բարգավաճ», «Օրինաց երկիր» կամ որեւէ այլ կուսակցության անդամ: Որովհետեւ այդ քվեարկությունը ճակատագրական է եւ շրջադարձային է լինելու մեր պատմության կյանքում»: Ռուսամյանի խոսքերով՝ գործընթացում թելադրողը Թուրքիան է, քանի որ Հայաստանը կորցրել է այդ գործընթացի վրա ազդելու իր բոլոր լծակները:

ՖՈՏՈԼՈՒՐ

Այնուհետեւ հավաքված բազմությունը, որ, ի տարբերություն նախորդ հանրահավաքների, այնքան էլ աշխույժ չէր, Մաշտոցի պողոտայով շարժվեց դեպի Սահմանադրական դատարան, որտեղ Հայր Կարապետյանը մտնելով ՍԴ շենք եւ Դաշնակցության ու իրենց սատարող մի շարք ուժերի ու կուսակցությունների համատեղ պատրաստած նամակը փոխանցեց ՍԴ աշխատակազմի ղեկավար Ալիշան Հակոբյանին:

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայ եւ հույն հոգեւորականների հերթական ընդհարումը

2009-ի դեկտեմբերին Երուսաղեմում նորից ընդհարում տեղի ունեցավ հայ եւ հույն հոգեւորականների միջեւ, որը կարծես թե տխուր ավանդույթի է վերածվել: Վեճի առիթը ծագել է բեթղեհեմյան սուրբ քարայրի տարածքում՝ պատերի ու պատուհանների մաքրության համար: Այդ տարածքում հասակի ու ստորին պատերի մաքրելը հայերի իրավունքն է, բայց վերեւի պատերի ու պատուհանների հասվածի մաքրությունը՝ արդեն հույների, բայց հույների մաքրելու ժամանակ էլ հայերն այնտեղ ներկա պետք է լինեն, քանի որ հասակը հայկական տարածք է: Իսկ անցյալ տարի հույներն արաբների միջոցով խնդրել են, որ իրենց մաքրելու ժամանակ հայերը ներկա չլինեն, որպեսզի հույներն իրենց ավելի ազատ զգան: Մի անգամ հայոց պատրիարքությունը թույլ է տվել, իսկ արդյունքում՝ հույներն արդեն ոտնկանություն բերեցին հայերի դեմ: Սա դարձել է վեճի առիթ, սակայն իրական պատճառները գալիս են շատ ավելի հեռվից:

«Այս հակամարտության հիմքերը խոր պատմական արմատներ ունեն, կարելի է ասել՝ գալիս են 6-րդ դարից: Հայերի ներկայությունը Երուսաղեմում եղել է թե՛ քրիստոնեությունից առաջ, թե՛ հետո: 6-րդ դարում, երբ արդեն ազգային եկեղեցիներ ստեղծվեցին, Երուսաղեմն ուներ միասնական մի պատրիարք, այսինքն՝ ազգային հատկանիշ չկար, բայց Քաղկեդոնի ժողովից հետո, երբ ստեղծվեցին առանձին եկեղեցիներ, ստեղծվեցին նաեւ առանձին հայկական եւ հունաց պատրիարքություններ: Այս երկու պատրիարքներն իրենց հավասարապես ժառանգորդը համարեցին Երուսաղեմի պատրիարքական աթոռի: Այստեղից արդեն առաջացան իրավունքի տարբեր խնդիրներ, որոնք անընդհատ սրվում էին: Հաջորդ խնդիրները կապվում էին ծեսի, դավանանքի, տոմարական հաշվումների հետ», ասում է Գրականության ինստիտուտի փոխտնօրեն, Մատենադարանի ավագ գիտաշխատող **Վարդան Դեւրիկյանը**:

Միջնադարում հայկական եւ հունական զատիկները միշտ տարբերվել են, այն կոչվել է Ծռա Զատիկ, այսինքն՝ Զատիկը ծռվել էր. հայերը մի օր էին անում, հույները՝ մեկ այլ: Դա հատկապես 7 օրվա տարբերություն ուներ, ու միշտ վեճեր էին լինում, թե ում Զատիկն է ավելի վավերական: Այս կռիվներին, ընդհարումներին միշտ միջամտել են թե՛ օսմանյան իշխանություններն ու արաբները, թե՛ խաչակիրները, եւ սա նաեւ եկեղեցաքաղաքական հարց է եղել, այսինքն՝ ներքին եկեղեցական խնդիրը դարձել է արտաքին քաղաքական հարց:

«Այն երկիրը, որը տիրել է Երուսաղեմին, աշխատել է նսեմացնել, ավելի քչացնել այն կողմի իրավունքները, որն իր համար այդ պահին քաղաքական վտանգ է ներկայացրել: Եվ դա իր դասական ձեւակերպումը գտավ օսմանյան շրջանում: Սուրբ երկրի իրավատերերը եկեղեցական 3 մեծ կառույցներն են՝ հունաց, հայոց եւ կաթողիկե լատին եկեղեցին: Օսմանյան կայսրությանը շատ ձեռնտու էր, որ այս 3-ի մեջ անընդհատ հակասություններ լինեին, քանի որ եթե 3 քրիստոնյա ժողովուրդների եկեղեցիները միանային, թե՛ ներքին, թե՛ արտաքին վտանգ կլիներ կայսրության համար», ասում է Վարդան Դեւրիկյանը:

Ըստ Վ. Դեւրիկյանի՝ վերջին միջադեպի փաստերը մեղադրում են միայն հակառակ՝ հունաց կողմին: Բոլոր տեղերում էլ պետք է հավասարության սկզբունքը լինի: Երուսաղեմում, կարելի է ասել, մի չգրված օրենք կա՝ մի տարի, եթե մեկը մի բան արեց, դա արդեն ավանդույթ է դառնում: Դրա համար էլ Երուսաղեմի հայոց պատրիարքությունը կոչվում է զինվորյալ միաբանություն, որովհետեւ ինչքան հոգեւորական են, միաժամանակ այդքան էլ այդ տեղերի պաշտպաններն են:

Եթե մի անգամ զիջեցիր, ապա դա արդեն օրենքի ուժ է ստանում, հետեւաբար զիջեցիր, ուրեմն էլ տերը չես: Հայերի մասնակցությունը միջադեպին եղել է արդեն հարկադրված, որովհետեւ ուրիշ ելք էլ չի եղել, իսկ այս քայլն անվերապահորեն պատիվ չի բերում Երուսաղեմի հունաց պատրիարքին ու այնտեղի հույն հոգեւորականությանը:

«Հրեաները Երուսաղեմը հռչակել են իրենց մայրաքաղաք՝ չնայած աշխարհի ոչ մի պետություն չի ընդունում դա: Ամենամեծ սրբությունը, որ հրեաներինն է, Սիոն լեռն է: Այսօր Սիոն լեռը հայոց թաղամաս է, որտեղ գտնվում են մեր սրբությունները՝ Սրբոց Հակոբյանց տաճարը, Սրբոց Փրկչի տաճարը, մեր մատենադարանը, հայկական գերեզմանատունը, պատրիարքների ձայնները: Սակայն միակ տեղը հին քաղաքի, որտեղով անցնում է մեքենան, հայոց թաղն է: Երբ դուրս ես գալիս Սրբոց Հակոբյանց վանքից, հրեական այդ մեքենաները տեսնում ես, որ ուղղակի գնում-գալիս են քո առջեւով ու վտանգ են ստեղծում ամեն հայի համար: Իմ կարծիքով՝ հույների ագրեսիվությունը գալիս է այլ տեղի թելադրանքով, հույներն ուղղակի գործիք են դառնում ինչ-որ ուժերի», ասում է Երեւանի Սուրբ Սարգիս եկեղեցու հոգեւոր հովիվ **Տեր Շահե քահանա Հայրապետյանը**:

Հույների թիկունքում կանգնած են ամբողջ ուղղափառ եկեղեցիները եւ հույն պետականությունը, իսկ հայերը սահմանափակվում են միայն հայ պատրիարքության սահմանների ներսում: Մենք երբեք չենք ասում՝ իսկ ո՞ւր է հայոց պետությունը: Մեր հոգեւորականությունը սիրված զինվորյալ է այնտեղ: Ցավոք, մեր պետությունն իրավասու չէ միջամտելու այդ ամենին, որովհետեւ դա արդեն կնշանակի միջամտել ուրիշ պետության խնդիրներին:

Ըստ Տեր Շահեի՝ մենք բռունցքի ուժով ենք պահպանում մեր տարածքներն այնտեղ, այլապես մենք կորած ենք: Երուսաղեմը մեր հոգեւոր առաջին ճակատն է, իսկ հրեական պետությունն արդեն Սիոն լեռը դատարկում է հայությունից:

Տեր Շահե քահանան 47 ուխտավորներով ամսի 17-ին գնալու է Երուսաղեմ, ասում է, որ այնտեղ հայ ուխտավորների մեծ կարիք է զգացվում, հատկապես տաղավար տոների ժամանակ, իսկ ամսի 18-ին հին տոմարով Սուրբ Ծնունդն է Բեթղեհեմում:

Տեր Շահե քհն. տեղեկացնում է, որ ըստ վերջին տվյալների՝ Պաղեստինյան պետությունն արդեն ներողություն է խնդրել հայերից կատարվածի համար:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

AZG NEW PDF.qxd 1/11/2010 10:16 PM Page 1

Դիմանկար

1988 թվականի մարտի 2: Երեւանում ոչ ոք ոչինչ չգիտեր Սումգայիթի մասին: Հնարավոր է, կային մարդիկ, որոնց նախօրեին Բաքվից ու մերձակայքից զանգել էին ազգականներն ու պատմել կատարված անասելի ողբերգության մասին: Վաղ առավոտյան ինձ զանգեցին Հայաստանի կոմկուսի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի ընդունարանից եւ ժամը տասին հրավիրեցին նրա առանձնասենյակ: Երբ մտա ընդունարան, արդեն այնտեղ էին Սիլվա Կապուտիկյանը, Իգոր Մուրադյանը եւ էլի մի քանի մարդ:

Մեկ րոպե անց մեզ հրավիրեցին Դեմիրճյանի աշխատասենյակ: Երկար սեղանի շուրջը նստած էին ութ մարդ: Կենտրոնում քաղբյուրոյի անդամության թեկնածու Վլադիմիր Դոլգիխն էր: Նրա մի կողքին նստած էր Կարեն Դեմիրճյանը, մյուսին՝ ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Անատոլի Լուկյանովը: Մենք բոլորս տեղավորվեցինք նրանց դիմաց: Ոչ մեծ դադարից հետո Դոլգիխը ոտքի կանգնեց եւ միանգամից ներեց.

- Դե ինչ: Սա՞ էիք ուզում...

Ապա պատմեց, թե ինչ էր պատահել Սումգայիթում, բերելով թվեր եւ նկարագրելով հայերի դեմ չարագործությունների մղձավանջային պատկերներ:

Մենք բոլորս, ասես պայմանավորված, միանման արձագանքեցինք էությամբ այդքան հրեավոր «Սա՞ էիք ուզում» հարցին: Ոչ Դոլգիխը, ոչ նրա մոսկովյան թիմը ամենայն հավանականությամբ չգիտեին, որ նորմալ պետության մեջ անիմաստ է «ուզենալ» սեփական ժողովրդի ցեղասպանությունը օրը ցերեկով: Թեեւ մեզ համար ոչ մի զարմանալի բան չկար ո՛չ հայերի զանգվածային սպանությունների ու նրանց տների հրդեհման, ո՛չ էլ խմբովին բռնաբարությունների մեջ: Պատահական չէր, որ կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղարի աշխատասենյակում հնչեց մեր ժողովրդի համար գործածական «թուրքը մնում է թուրք» արտահայտությունը, ինչին Սիլվան հավելեց, թե սումգայիթյան բարբարոսության բուն փաստը խոսում է այն մասին, որ ղարաբաղցիները պարզապես դատապարտված էին սկսելու պայքարը հանուն իրենց ապագայի: Իգորն ամեն ինչում մեղադրեց Ռուսաստանին, որը, կանխատեսելով դժբախտությունը, վաղուց պետք է ՌԽՖՍՀ-ի կազմի մեջ առներ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը: Մի՞թե մեզ բոլորիս քիչ էր Նախիջեւանի ողբերգական ճակատագիրը: Այդ պահին ես ինձ անընդհատ բռնեցնում էի մեկ մարդու մասին մտածելիս. Ֆադեյ Սարգսյանի: Եվ գիտակցում էի, որ դրա մեջ ուրույն կենսական տրամաբանություն կար:

Դժվար չէր գուշակել, որ այն ամենից հետո, ինչ տեղի ունեցավ Սումգայիթում, այնտեղ այլեւս հայեր չեն մնա: Դա նշանակում էր, որ մեկ-երկու օր անց փախստականների բազմահազարանոց հոսքը լցվելու է Երեւան: Եվ ինքս ինձ տալիս էի մեր սերնդի համար անսովոր հարցը. «Արդյոք պատրա՞ստ ենք մենք ընդունելու հազարավոր ու հազարավոր դժբախտների եւ անօթեւանների: Չէ՞ որ դա ոչ մեկ օրով է, ոչ երկու: Այստեղ կառավարության, պետության ձեռքի կարիքը կա: Եվ հենց դուրս եկանք Դեմիրճյանի աշխատասենյակից, ես զանգեցի Ֆադեյ Սարգսյանին: Պայմանավորվեցինք հանդիպել:

Երկու ժամ անց Սոս Սարգսյանի եւ Սարգիս Մուրադյանի հետ արդեն Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի աշխատասենյակում էինք: Խոսակցությունն այն մասին էր, որ անհրաժեշտ է Ռուսաստանի տարբեր տարածաշրջաններից տեղ հատկացնել մոտ հարյուր ֆինանսական փայտե տնակներ:

Պետք էր ծանոթ լինել Ֆադեյ Տաճատովիչի էությանն ու բնավորությանը: Որպալով նախաձեռնության կարեւորությունը, նա իսկույն ձեռքը մեկնեց բարձր հաճախականության հեռախոսին, որը համամիութենական կառավարական կապի պարապդիր միջոց էր: Շուտով սիբիրյան ու բելոռուսական ճանապարհներին էին արգախյան մի քանի պատվիրակություններ: Մեր աչքերի առջեւ Ստեփանակերտում հայտնվեց «Սումգայիթյան քաղաքը»: Շինարարությունը գլխավորում էր Ստեփանակերտի քաղաքապետ Մաքսիմ Միրզոյանը: Բայց մինչ այդ պետք էր ահավոր վիշտ վերապրած մեր դժբախտ հայրենակիցներին դիմավորել Երեւանում եւ տեղավորել: Փող էր անհրաժեշտ: Այդ հարցը միայն կառավարական մակարդակով չէր կարելի լուծել հենց թեկուզ այն պատճառով, որ Կրեմլը նույնիսկ ցավակցություն չհայտնեց Սումգայիթի զոհերի հարազատներին ու բարեկամներին: Եվ մենք Սոսի ու Սարգիսի հետ մեկնեցինք Էջմիածին, Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի մոտ: Ջէինք հասցրել ներկայացնել խնդրի էությունը, երբ կաթողիկոսն աչքերը կկոցելով մեղմ ժպտաց եւ ասաց, որ մինչ մենք ճանապարհին էինք, Ֆադեյ Սարգսյանը հասցրել էր զանգել իրեն:

Երկու օր անց Մինիստրների խորհրդի նախագահը մեզ հրավիրեց իր մոտ: Պատմեց, որ զանգել է Ադրբեջանի Մինիստրների խորհրդի նախագահ Գ. Սեիդովը եւ գործընկերոջ իրավունքով ցավակցություն հայտնել Սումգայիթում հայկական ջարդի կապակցությամբ: Աստծո անունով երդվել է, թե սգում է ողջ Ադրբեջանը, եւ որ ինքն անձամբ պատրաստ է գալ մեզ մոտ ու ծնկաչոք ներում հայցել հայ ժողովրդից: Պետական անվտանգության կոմիտեի նախագահ Մարիուս Յուզբաշյանի տեղեկություններով՝ Բաքվում տագնապած էին: Ղեկավարությունը վախենում էր պատժից, ընդհուպ Արցախը Հայաստանին հանձնելը: Սակայն Ֆադեյ Սարգսյանը չհավատաց իր ադրբեջանցի գործընկերոջ եւ ոչ մի խոսքին: Բացի ամենայնից, նա շատ լավ գիտեր ԽՍՀՄ-ի այն ժամանակվա ղեկավարներին եւ առաջին հերթին Գորբաչովին ու Լիգաչովին, որոնք սումգայիթյան ցեղասպանություն հասկացությունն իջեցրին մինչեւ սովորական խուլիգանության փաստի:

Այդ ողբերգական օրերին ես համարյա ամեն օր այցելում էի Մինխորհրդի նախագահին: Նրա պատուհանում լույսը գիշերն էլ չէր մարում: Նրա կողքին միշտ կարելի էր տեսնել իր առաջին տեղակալ Վլադիմիր Մովսիսյանին, առանց որի եռանդուն գործունեության դժվար էր պատկերացնել սումգայիթյան դժոխքի միջով անցած մեր հայրենակիցների ընդունման եւ տեղավորման գործուն կազմակերպչական աշխատանքը:

Պետք է հաշվի առնել, որ Ստեփանակերտում սումգայիթյան ողբերգությունը ընթանում էր արդեն սկսած պատերազմի խորապատկերին, որ մեզ էր պարտադրել Բաքուն: Եվ Մոսկվայում ու Երեւանում տեղի ունեցող կուսակցական եւ կառավարական բոլոր հանդիպումներին ամենաակտիվ մասնակցություն էր հանդես բերում Ֆադեյ Տաճատովիչը, որին Գորբաչովը մեղադրում էր «Ղարաբաղ» կոմիտեին եռանդուն աջակցելու մեջ:

... Ֆադեյ Սարգսյանի կազմակերպչական տաղանդը եւ շփման անսովոր ունակությունը անգնահատելի էին հատկապես սպիտակյան երկրաշարժի առաջին օրերին: Այդ մասին չէր կարող չիմանալ Գորբաչովը թեկուզ այն պատճառով, որ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Նիկոլայ Ռիժկովը, որն աղետի գոտում ներկայացնում էր ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոն, լավ գիտեր իր գործընկերոջ բարձր հեղինակության մասին ոչ միայն Հայաստանում, գիտեր նրա գործնական կարողությունների մասին, որոնք այնքան կարեւոր էին արտակարգ իրավիճակներում: Սակայն այդ ժամանակ Գորբաչովին շատ ավելի հուզում էր իրավիճակը Ղարաբաղում: Եվ հենց այստեղ էր, որ ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղարին ձեռք չէր տալիս Ֆադեյ Սարգսյանը: Ղարաբաղի տեղի մասին իր դիրքորոշմամբ: Բացի ամենայնից, ԽՍՀՄ առաջնորդին իր համար անսպասելիորեն գլխացավանք դարձած Հայաստանում անհրաժեշտ էր սեփական մարդ ունենալ: Եվ ահա որոշեց բազմափորձ պետական գործչին, արտադրության բազմաթիվ ճյուղերի կազմակերպչին փոխարինել իր սավրոպոլյան ծառայակցով, որը բնականաբար ծանոթ չէր Հայաստանի տնտեսությանը, կադրերին, առանձնահատկությանը: Դա տեղի ունեցավ սպիտակյան երկրաշարժից բառացիորեն մեկ ամիս անց: Երկրաշարժ, որի հետեւանքով զոհվեցին տասնյակ հազարավոր մարդիկ, լիովին կամ մասամբ տանիքից զրկվեց մոտ մեկ միլիոնը: Դժվար թե այսօր որեւէ մեկն իմանա, թե ինչու Գորբաչովը Հայաստանի Մինիստրների խորհրդի նախագահի հետագա ճակատագրի հարցը բարձրացրեց հենց 1989 թվականի հունվարի 10-ին: Գորբաչովը պատրաստվում էր մեկ օր անց հրամանագիր ստորագրել Ղարաբաղում Հատուկ կառավարման կոմիտե ստեղծելու մասին Արկադի Վոլսկու գլխավորությամբ եւ նրան պետք էր ամենաբարձր մակարդակով, երկու հանրապետությունների ներկայացուցիչների ներկայությամբ կազմակերպել հերթական թատերախաղը, որի ժամանակ սպառնաց Ղարաբաղի խնդիրը լուծել հին կադրերին նորերով փոխարինելով: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո իմ ձեռքն ընկավ քաղբյուրոյի այդ նիստի արձանագրության աշխատանքային սղագրությունը: Այնտեղ անընդհատ կարելի է հանդիպել նախադասությունների տեղերում կադրային փոփոխությունների մասին: Միաժամանակ Գորբաչովն անպայման ավելացնում էր. «Մենք ձեզ կօգնենք»:

Այդ մարդն իրոք ենթադրում էր, թե «սումգայիթից» հետո կարելի էր այդքան բարդ հարցը լուծել «թարմ ուժերով»: Նա այդպես էլ ասում էր. «Անհրաժեշտ է ներգրավել թարմ ուժեր, որոնք ցավում են ժողովրդի համար եւ կգործեն «Ղարաբաղ» կոմիտեի դեմ...»: Արկադի Վոլսկին Ստեփանակերտում ինձ պատմեց, որ քաղբյուրոյի նիստին Նիկոլայ Ռիժկովը, տեղյակ լինելով Սարգսյանի կազմակերպչական մեծ կարողությունների մասին եւ հաշվի առնելով Հայաստանում ստեղծված ողբերգական իրավիճակը, խորհուրդ էր տվել այնուամենայնիվ չշտապել իր հայ գործընկերոջ ազատման գործում: Բայց ո՞չ: Ջափից շատ «մեղքեր» էր գործել Ֆադեյ Սարգսյանը: Մերթ նա չափազանց ակտիվորեն էր զբաղվել Սումգայիթի զոհերի ճակատագրով, մերթ չափազանց հաճախ ու հայրաբար էր հանդիպել Ղարաբաղյան շարժման առաջնորդների հետ, մերթ էլ գլխավորել Արցախին մարդասիրական օգնություն հասցնող անվերջանալի շարասյունը: Եվ դա այն դեպքում, երբ պարտավոր էր կանխել «սադրանքները»: Նրան մեղադրում էին եւ այն բանում, որ հաճախ էր խորհրդակցում իր նախկին առաջին տեղակալ Ալեքսան Կիրակոսյանի հետ, որը հայտնի էր որպես մոլի ազգայնական:

Այն օրերին, երբ Ֆադեյ Տաճատովիչը հայտնվեց հալածանքի մեջ, նրա հեղինակությունն ավելի աճեց: Վոլսկին պատմում էր, որ Գորբաչովն անթաքույց անհանգստացած էր, թե նախկին առաջին մինիստրը, հայտնվելով մերժվածների շարքում, մի որեւէ վտանգավոր հայտարարություն կանի: Ինչպես պարզվում է, աշխարհի մեծագույն տերության առաջնորդը պարզապես ոչինչ չգիտեր միութենական մի ամբողջ հանրապետության բազմամյա ղեկավարի մասին: Չգիտեր, որ Ֆադեյ Սարգսյանն իր անունը ժառանգել է պապից, որը Նախիջեւանի Կզնուս լեգենդար գյուղի հոգեւորականն էր: Կրեմլում չգիտեին նաեւ, որ նրա պապ Թադեւոսը (Ֆադեյ) հայ մեծ զորավար եւ փիլիսոփա Գարեգին Նժդեհի մերձավոր ազգականն էր: Չգիտեին: Հակառակ դեպքում նրանց մտքով էլ չէր անցնի, թե Ֆադեյ Սարգսյանը երբեւէ կարող է «աբիժնիկի» հանդերձներ հագնել: Ինչպիսի՞ ողորմելի բառ: Չէր կարող այդպիսին լինել գեներալ Սարգսյանը ոչ միայն որպես հայ հոգեւորականի թոռ եւ Գարեգին Նժդեհի ծոռնակից զարմիկ, այլեւ որպես անհատ, որն ինքն էր կերտել իր կերպարը: Գերազանցության դիպլոմով ավարտել էր ռազմական ակադեմիան: Գորբաչովը կոմերիտական կուսակցության կյանքում նոր-նոր հաստատվում էր, երբ Սարգսյանը ղեկավար պաշտոններ էր զբաղեցնում ԽՍՀՄ պաշտպանության նախարարության հրետանա-հրթիռային գլխավոր վարչությունում: Ողջ կյանքում իրեն համարել է պրոֆեսիոնալ զինվորական: Կոչումով գեներալ-մայոր է: Կրեմլում հավանաբար չգիտեին, որ գեներալները չեն կարող խղճալի նեղացկոտների վերածվել: Ինչպես եւ չգիտեին, որ նա երբեք չէր երազել խորհրդային չինովնիկի պաշտոնի մասին: Բավական է հիշել, որ նա հարյուրավոր գիտական աշխատություններ ուներ, որ Երեւանի մաթեմատիկական գիտությունների ԳՀԻ-ի տնօրենն էր: Եվ թերեւս ամենագլխավորն այն է, որ նա տեխնիկական գիտությունների դոկտոր է, ակադեմիկոս, ԽՍՀՄ-ում առաջին հաշվիչ մեքենայի ստեղծողներից մեկը:

... Երբ հայտնի դարձավ, որ Ֆադեյ Սարգսյանը սեփական ձեռքով դիմում է գրել զբաղեցրած պաշտոնից ազատվելու մասին, միանգամից Հենրիխ Իգիթյանը տարակուսանք հայտնեց, իբր ինչպե՞ս կարելի էր երկրի համար այսքան ծանր ժամանակներում հրաժարական տալ: Այդ լուրը հասավ նաեւ Ֆադեյ Սարգսյանին, որը լայն ժպտաց եւ զուտ ֆադեյական ձեւով ասաց, «որովհետեւ Հենրիխ Իգիթյանը իմ լավ բարեկամն է»: Տարիներ անց Սարգսյանն այդ դրվագի մասին կիհշատակի իր «Կյանքի դասեր» գրքում: Հենրիխն ախր այն ժամանակ չգիտեր ամենագլխավորի մասին: Այն մասին, թե ինչպես էին Ֆադեյ Սարգսյանին այն ժամանակ, ըստ էության, հայտարարել անցանկալի անձնավորություն: Ինչպես չգիտեր եւ այն, որ երբ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ, իմաստուն ու բարի Նիկոլայ Ռիժկովը մի քանի անգամ առաջարկել էր նախկին գործընկերոջը օգնել աշխատանքի տեղավորելու հարցում, միայն մերժում էր ստացել: Մերժում՝ Ֆադեյին բնորոշ երախտագիտությամբ: Այդպիսին է այդ մարդը լեգենդար Կզնուցից:

Մարդը լեգենդար Կզնուցից

ՁՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ

Կյանքից հեռացավ մեր ժամանակակիցը, որի անվան հետ կապված են մեր հայրենիքի իրական առաջընթացը, իրական զարգացման ու բարգավաճման երկար տարիները: Նա կամավոր էր, Հայրենական մեծ պատերազմի ճակատային զինվոր, գեներալ, գիտական հետազոտող, գիտնական, գիտության եւ արտադրության կազմակերպիչ, ականավոր պետական գործիչ, մեծ հայրենասեր, օրինավոր մարդ:

Ֆադեյ Տաճատի Սարգսյանին ես վերջին անգամ տեսել էի Ռուս-հայկական համալսարանի հանդիսասրահում, որտեղ նրան մեծարում էին իր ուսանողական նվիրված գիտական կոնֆերանսում: Այնտեղ ես հանդես եկա, ինչպես ասվում է, զեկուցման թեզիսներով: Եվ այսօր ուզում եմ խոսքս հասցեագրել նախ եւ առաջ երիտասարդությանը, որը, ավա՜ղ, քիչ գիտի մեր ապագայի համար այնքան շատ բան արած մարդու մասին: Ես կարծում եմ, նման մարդկանց հիշատակը պետք է լինի ներգործուն, հեռանկարին միտված: Դա շատ կարեւոր է հենց այսօրվա երիտասարդության համար, հետեւաբար՝ ապագայի համար:



AZG NEW PDF.qxd 1/11/2010 10:16 PM Page 1

«Ուկրաինայում հայկական եկեղեցուն որեւէ վտանգ չի սպառնում»

Հայաստանում Ուկրաինայի դեսպան Ալեքսանդր Բոժկոյի բացառիկ հարցազրույցը «Ազգ» օրաթերթին

- Պարո՛ն դեսպան, ինչպե՞ս կբնութագրեք հայ-ուկրաինական հարաբերությունների ներկա փուլը:

- Տնտեսական առումով, դժբախտաբար, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն էական ազդեցություն թողեց մինչ այդ արագընթաց զարգացող հայ-ուկրաինական տնտեսական հարաբերությունների վրա: Հենց այդ պատճառով դեսպանատունը հոկտեմբերին կազմակերպեց հայ-ուկրաինական միջկառավարական համատեղ հանձնաժողով՝ քննարկելու տնտեսական համագործակցության հարցեր: Անցյալ տարի ընդհանուր առևտրաշրջանառության ծավալներով Ուկրաինան Հայաստանի 4-րդ գործընկերն էր Ռուսաստանից, Գերմանիայից եւ Չինաստանից հետո: Թեպետ ճգնաժամի ազդեցության պայմաններում նկատելի էին որոշակի խնդիրներ, այնուամենայնիվ վերջին ամիսների դրական միտումներն ապացուցեցին, որ դժվարությունները ժամանակավոր են: Բազմաթիվ հանդիպումներ, մասնավորապես Խարկովի մարզի ղեկավար Ավագովի այցելությունը Հայաստան եւ ձեռք բերված պայմանավորվածությունները փաստեցին, որ երկու երկրների միջեւ կա համագործակցության հսկայական հեռանկար:

- Ինչպիսի՞ նոր նախագծեր են սպասվում այս տարի:

- Հուսանք, որ այս տարի կակտիվանա երկու երկրների քաղաքական երկխոսությունը: Դա մասնավորապես կապված է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի Ուկրաինա կատարելիք պաշտոնական այցի հետ: Նախատեսված է նաեւ Ուկրաինայի Գերագույն ռադայի պատվիրակության այցը Հայաստան: Կիեւում կկայանա հերթական՝ 5-րդ հայ-ուկրաինական միջկառավարական համաժողովը՝ տնտեսական համագործակցության թեմայով:

- Ուկրաինայում, մասնավորապես Ղրիմում, կա բավական մեծ հայկական համայնք: Ինչպիսի՞ն են հայ համայնքի եւ Ուկրաինայի իշխանությունների հարաբերությունները: Կա՞ն խնդիրներ համայնքի եւ իշխանությունների միջեւ:

- Ուկրաինայում, մասնավորապես Ղրիմում, ապրում են ազգությամբ հայ Ուկրաինայի քաղաքացիներ: Եթե 90-ականներին նրանց թիվը 30.000 էր, այժմ այդ թիվը տասն անգամ ավելացել է: Նրանք Ուկրաինան համարում են իրենց երկրորդ հայրենիքը եւ ներկայանում ոչ միայն առեւտրի կամ արտադրության ոլորտներում, այլեւ՝ մշակույթի եւ քաղաքականության: Աշխատանքի բերումով հաճախ եմ շփվում նրանց հետ ու զգում եմ, որ նրանք իրենց համարում են Ուկրաինայի լիակատար քաղաքացիներ: Պետությունը հսկայական ուշադրություն է դարձնում հայերի մշակութային եւ հոգեւոր խնդիրներին: Դրա ապացույցը Սուրբ Խաչ եկեղեցու 650-ամյակին նվիրված միջոցառումներն էին, որոնց հրավիրված էին ՀՀ նախագահն ու Ամենայն հայոց կաթողիկոսը: Իսկ թե ինչ խնդիրներ կան, կարծում եմ՝ դրանք նույնն են, ինչ Հայաստանում: Միայն այն տարբերությամբ, որ Ուկրաինան բազմազգ պետություն է, հետեւաբար հաշվի են առնվում ոչ միայն հայերի, այլեւ երկրում ապրող այլ ազգային փոքրամասնությունների խնդիրները:

- Վերջին շրջանում հաճախակի դարձան խոսակցությունները Ուկրաինայում հայկական եկեղեցիների կարգավիճակի վերաբերյալ: Որպես հայագետ եւ դեսպան՝ ինչպե՞ս կհիմնավորեք իշխանությունների՝ եկեղեցին ազգագրական թանգարան կառուցելու որոշումը:

- Չգիտեմ, թե կարգավիճակ ասելով ինչ նկատի ունեք: Ուկրաինայում հայկական եկեղեցին գործում է համաձայն Ուկրաինայի սահմանադրության այն օրենքների, ինչպես եւ այլ եկեղեցիներ: Հայկական եկեղեցին Ուկրաինայում չունի այն խնդիրները, որոնց, դժբախտաբար, հանդիպում է այլ երկրներում: Եվ եթե այդ կտրվածքով խոսենք կարգավիճակի մասին, ապա պետք է նշել, որ Մայր աթոռը բազմիցս իր շնորհակալությունն է հայտնել Ուկրաինայի կառավարությանը՝ հայկական եկեղեցու նկատմամբ վերաբերմունքի համար:

- Ինչպե՞ս է Ուկրաինան գնահատում հայ-թուրքական արձանագրությունները ու երկկողմ հարաբերություններ հաստատելու գործընթացը:

- Վստահաբար՝ Հարավային Կովկասում տեղի ունեցող իրադարձությունները կարելի է անվանել պատմական: Մեկդարյա ատելությունից եւ անվստահությունից հետո երկու հարեւան երկրներ մեծ ճանապարհի առաջին քայլերն են կատարում, որը կբերի նախկին վիրավորանքների եւ դրանց հետեւանքների հաղթահարման եւ այն ընկալման, որ նրանք դատապարտված են ապրել կողք կողքի եւ միասին լուծել խնդիրները ոչ թե ուժի գործածությամբ, այլ փոխզիջումների ճանապարհով:

- Հարաբերությունների հաստատումը ի՞նչ կփոխի տարածաշրջանում: Եվ այդ առումով ինչպիսի՞ ակնկալիքներ կամ գուցե անհանգստություններ ունի Ուկրաինան:

- Հայ-թուրքական հարաբերությունների բարելավումը ոչ միայն կարեւոր նշանակություն կունենա երկու երկրների տնտեսական զարգացման առումով, այլեւ հարավկովկասյան տարածաշրջանում քաղաքական կյանքի նորմալացման գործում: Կարծում ենք՝ այս գործընթացը կարեւորագույն խթան կդառնա Հարավային Կովկասի իրավիճակի կայունացման եւ անվտանգության առումով, կնպաստի սեւծովյան եւ կասպյան տարածաշրջանի երկրների՝ տնտեսական ծրագրերի ոլորտում ավելի ակտիվ համագործակցությանը եւ կզարգացնի համագործակցությունը եվրոպական կառույցների հետ: Այս առումով համամիտ չեմ այն փորձագետների հետ, ովքեր խոսելով հայ-թուրքական սահմանի բացման տնտեսական արդյունքներից, կարծիք են հայտնում Հայաստանի եւ Ուկրաինայի միջեւ առեւտրի ծավալների անկման մասին: Ընդհակառակը, սահմանի բացումը կնպաստի Հայաստանի տնտեսության զարգացմանը, ինչի շնորհիվ հայկական շուկան ավելի բաց ու գրավիչ կլինի ուկրաինական ապրանքների համար:

- Եվ վերջին հարցը. ըստ տվյալների՝ Ուկրաինան Ադրբեջանի զենքի գլխավոր մատակարարն է: Հաշվի առնելով Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի ռազմաշունչ հայտարարությունները, չե՞ք կարծում, որ Ադրբեջանին զենքի տրամադրումը կհանգեցնի տարածաշրջանում անկանխատեսելի զարգացումների:

- Ստիպված եմ ձեզ հիասթափեցնել, բայց, համաձայն «ՄԱԿ-ի ընդհանուր սպառազինության ռեգիստրի», Ադրբեջանի զենքի հիմնական մատակարարը վերջին տարիներին Հայաստանի մտերիմ գործընկերն է ԵԱՀԿ-ում: Հետեւաբար, հասկանալով ձեր անհանգստությունը, խորհուրդ կտայի այդ հարցն ուղղել նրանց:

ՀԱՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՉԱԳՐԵԲ

Խորվաթիայում նախագահ ընտրվեց սոցիալ-դեմոկրատ Յոսիպովիչը

Խորվաթիայում կիրակի օրն անցկացված նախագահական ընտրությունների 2-րդ փուլում (առաջինն անցկացվել էր դեկտեմբերին) հաջողության է հասել սոցիալ-դեմոկրատական ընդդիմության թեկնածու Ի-վո Յոսիպովիչը, զգալի առավելությամբ հաղթելով իր ախոյանին՝ Զագրեբի քաղաքագլխին:

Յոսիպովիչը երկրում հայտնի իրավաբան է, կոմպոզիտոր եւ Սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ նա ստացել է քվեների 60,29 տոկոսը, իսկ Զագրեբի քաղաքապետ, անկախ թեկնածու Միլան Բանդիչը՝ 39,71 տոկոս: Այս տվյալները հայտնի են դարձել քվեաթերթիկների 99 տոկոսի հաշվառումից հետո: Քվեարկությանը մասնակցել է ձայնի իրավունք ունեցող բնակիչների 50 տոկոսը: «Ֆիգարո» թերթը նշում է, որ նման մասնակցության պայմաններում չի բացառվում, որ ապագայում հանրապետության նախագահի եւ կառավարության միջեւ հակասություններ ծագեն:

Յոսիպովիչը իր հաղթանակը համեմատել է «հաղթական սիմֆոնիայի» հետ: Միլան Բանդիչը շնորհավորել է մրցակցին եւ արդեն հունվարի 11-ից վերսկսել է քաղաքապետի պարտականությունների կատարումը:

Յոսիպովիչը 52 տարեկան է, միջազգային իրավունքի պրոֆեսոր, քաղաքական ասպարեզ է մուտք գործել վեց տարի առաջ: Նրան աջակցում են ձախերը, քաղաքային բնակչության խավերը եւ առայժմ պաշտոնավարող նախագահ Ստիպե Մեսիչը:

56-ամյա Բանդիչը եռանդուն եւ պոպուլիստ գործիչ է, տարիներ շարունակ մայրաքաղաք Զագրեբի ղեկավարն է: Նրա ընտրարշավին օգնում էին աջերը եւ ազգայնականները:

Յոսիպովիչը երրորդ նախագահն է 1991-ին Հարավսլավիայից անջատված եւ իրեն անկախ հռչակած Խորվաթիայում: Վերջինս 2008-ին դարձավ ՆԱՏՕ-ի անդամ եւ հավակնում է մինչեւ 2012 թվականը մտնել Եվրոմիության կազմի մեջ: Յոսիպովիչը հայտնի է որպես եվրոպամետ գործիչ:

Նախագահական ընտրարշավի ժամանակ երկու թեկնածուներն էլ խոստացել էին լավ հարաբերություններ պահպանել Վաշինգտոնի եւ Բրյուսելի հետ: Ընդամին Բանդիչը շեշտը դրել էր հայրենասիրության եւ հարեւան Սերբիայի դեմ թշնամանքի հրահրման վրա: Հարավսլավիայի 1991 թ. մասնատման հետեւանքներից մեկը դարձել էր սերբ-խորվաթական պատերազմը:

Ինչ վերաբերում է Յոսիպովիչին, նա խոստանում է պայքարել «հանուն ավելի լավ եւ արդար Խորվաթիայի»:

Իսրայելը պարիսպ կկառուցի Եգիպտոսի սահմանին

Իսրայելի կառավարությունը հավանություն է տվել Եգիպտոսի սահմանում պարիսպ կառուցելու ծրագրին: Այդ արգելապատնեշը պետք է կասեցնի անօրինական ներգաղթը եւ գրոհայինների թափանցումը Իսրայել, հաղորդում է «Եդիոս Ահրոնոս» թերթը: Կառույցը կհանդերձավորվի սահմանային անցումները վերահսկող սարքերով:

Արգելապատնեշը կառուցվելու է երկու տարում եւ ունենալու է 266 կմ երկարություն: Նախագծի արժեքը գնահատվում է 270 մլն դոլար: Եգիպտական աղբյուրների տվյալներով, Իսրայելը Կահիրեին պատշաճաբար չի ծանուցել պարսպի շինարարության մասին, սակայն Եգիպտոսը դեմ չէ դրան, եթե շինարարությունն իրականացվի իսրայելական տարածքում:

Սկզբում պարիսպ կկառուցվի երկու հատվածում՝ Էյլաթի եւ Ռաֆիահի մոտակայքում: Վարչապետ Բենիամին Նաթանյահուի խոսքերով, վերջին հաշվով Իսրայելի ամբողջ տարածքը պատշաճաված կլինի ընդհատակյա ներգաղթից:

Ոստիկանության գնահատումների համաձայն՝ ամեն շաբաթ եգիպտա-իսրայելական սահմանը ապօրինաբար հատում է 100-200 մարդ: Նրանց մի մասը աշխատանքային միգրանտներ են, մյուսներին իշխանությունները համարում են «հանցավոր տարրեր» եւ աֆրիկացի փախստականներ: Իսրայելի ներքին գործերի նախարար Էլի Իշայը վերջիններիս անվանում է «դանդաղ գործողության սոցիալական ռումբ» եւ օրենսդիրներին հորդորում է արագացնել սահմանախախտներին աջակցողների պատիժը խստացնող օրենքի ընդունումը:

2003-ին սկսվեց Իսրայելը Այսրհորդանանից բաժանող «անվտանգության պատի» կառուցումը, որը շարունակվում է մինչեւ օրս: Նախագիծը քննադատում են ինչպես պաղեստինցիները, այնպես էլ միջազգային կազմակերպությունները, քանի որ պատը կառուցվում է ոչ թե սահմանազատման գծի երկայնքով, այլ պաղեստինյան տարածքում:

2009-ի դեկտեմբերին Եգիպտոսը իր հերթին սկսեց պողպատե պատ կառուցել Գազայի հատվածի սահմանին: Դեպի Գազա գաղտնի գեստուղիներով մախանենգ ապրանքի եւ զենքի առաքումը կասեցնելու նպատակով պողպատե թիթեղները հողի մեջ մտցվում են մինչեւ 30 մետր խորությամբ:

Կաշառակեր պաշտոնյաները ՉԺՀ-ից տարել են 50 մլրդ դոլար

Չինացի կաշառասուն պաշտոնյաները վերջին 30 տարում ՉԺՀ-ից արտերկիր են տարել 50 մլրդ դոլարին համարժեք գումար: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը՝ վկայակոչելով Չինաստանի պետական լրատվամիջոցներ:

Խոսքը երեք տասնամյակում ՉԺՀ-ից հեռացած 4000 պետական ծառայողների մասին է, որոնք ամբաստանվում են փողերի լվացման եւ օտարերկրյա հանցավոր խմբավորումների հետ կապված լինելու մեջ: Պաշտոնական տվյալների համաձայն՝ կաշառասուն պաշտոնյաների մեծ մասը ՉԺՀ-ից փախել է՝ օգտագործելով ինքնության կեղծ վկայականներ եւ օգտվելով ԱՄՆ-ի կամ Ավստրալիայի աջակցությունից:

Միայն 2009 թվականին ՉԺՀ-ում քննվել է 103 գործ, որոնցում 300 պաշտոնյաներ կապված են երկրից փողերի դուրսբերման հետ: Պաշտոնյաներից մեկը՝ Վենչժոու քաղաքի կոմկուսի բաժնի ղեկավարը, 2008-ին փախել է Ֆրանսիա: Ոստիկանությունը նրա կնոջը ձերբակալել է 20 մլն յուան (գրեթե 3 մլն դոլար) օրինականացնելու փորձի համար:

ՉԺՀ նախագահ Հու Ցզինտաոն քանիցս հայտարարել է, որ կաշառակերության դեմ մղվող պայքարը երկրի կառավարության առաջնային խնդիրն է եւ կոմկուսի համար կենաց-մահու հարց:

AZG NEW PDF.qxd 1/11/2010 10:34 PM Page 1

Ընկերոջս հիշատակին

Տարվա առաջին իսկ օրը տխուր լուր ստացա հեռավոր ափերից: Լոս-Անջելոսում վախճանվել էր հայ կինեմատոգրաֆիստների ընտանիքի հայտնի ներկայացուցիչ կինովավերագրող Միխայիլ Վարտանովը (Միքայել Վարդանյան):

1965 թվականին ավարտելով Համամիութենական կինոինստիտուտի օպերատորական ֆակուլտետը Մ. Վարտանովը Մոսկվայից եկավ Երեւան (նա ծնվել է 1937 թվականին Գրոզնի քաղաքում) արդեն որպես մրցանակակիր օպերատոր: Նրա «Պարի մարդիկ» դիպլոմային աշխատանքը Քոնարի (Գվինեա) միջազգային կինոփառատոնում արժանացել էր մրցանակի՝ որպես լավագույն օպերատորական աշխատանք:

Նույն թվականին գալով Երեւան, նա աշխատանքի է անցնում Երեւանի փաստավավերագրական ֆիլմերի կինոստուդիայում: 1966-ին նկարահանում է «Հայկական մանրանկարչությունը» երկմասանոց կինոակնարկը (ռեժ. Ե. Մանարյան): Երիտասարդ օպերատորը այս աշխատանքով կրկին հաստատում է «կինոաչքի» թարմ, առանց ավելորդ էֆեկտների նյութի հստակ զննման ու հավաստի մատուցման իր վարպետությունը: Կարճ ժամանակում նրա աշխատանքները գնահատվում են կինոստուդիայի ղեկավարության կողմից եւ Մ. Վարտանովին վստահվում է նաեւ ռեժիսորական գործը, որի վառ վկայություններն են «Հայկական հողի գույնը» (1969) եւ «Աշնանային հովերգություն» (1972) կինոէսսեները: Այս կինոժապավենները վառ եւ հարուստ են իրենց կենդանի գույներով, իրենց ներկապնակով, ինչպես, ասենք, Հայաստանի աշունը: Իրական փաստերն ու կենդանի գույները այստեղ ստանալով բանաստեղծական շունչ, դառնում են հուզիչ երգի հոգեթով տողեր, գունագեղ կտավի հարուստ նրբերանգներ:

Մ. Վարտանովը նկարահանել է շուրջ 50 ֆիլմ, որոնցից 7-ը գեղարվեստական (լիամետրաժ եւ կարճամետրաժ): Նրա լավագույն աշխատանքներից է «Թթենին» սիրված ու ճանաչված կարճամետրաժ գեղարվեստական ֆիլմը: Իսկ վավերագրական ֆիլմերից որպես լավագույն օպերատորական աշխատանք, անշուշտ, չպետք է մոռանալ ռեժիսոր

Մ. Վարտանովը Ս. Փարաջանովի հետ, 1989

Արտավազդ Փելեշյանի «Տարվա եղանակները» հանրահայտ ֆիլմում (1975) Մ. Վարտանովի մասնակցությունը:

Մ. Վարտանովի արվեստը սիրում եւ բարձր էր գնահատում Սերգեյ Փարաջանովը: Նրանց երկար տարիների մտերմության առհավաստյան մեծ արվեստի բարձր չափանիշն էր: Երկուսն էլ իսկական կինոյի մարդ էին, երկուսն էլ խստապահանջ ոչ միայն ուրիշների, այլեւ հենց իրենց ստեղծած գործերի նկատմամբ: Եվ պատահական չէր, որ շատերը Մ. Վարտանովին ճանաչում էին նաեւ որպես Փարաջանովի «հոգեւոր զավակի»: Պատահական չէր նաեւ, որ Վարտանովը իր հաջորդ աշխատանքը նվիրեց Մեծ Բարեկամի հիշատակին: «Փարաջանով: Վերջին գարուն», այսպես է կոչվում այդ ֆիլմը, որը թեեւ ստեղծվեց 1992-ի դժվար ու անհանգիստ տարում, սակայն ինչ-ինչ պատճառներով չներկայացվեց Հայաստանի հանդիսատեսին: Դրա փոխարեն սակայն ցուցադրվեց Մոսկվայում, Պետերբուրգում, Փարիզում, Բեռլինում, Պրահայում, Վաշինգտոնում, Նյու- Յորքում, Չիկագոյում, Մոնռեալում, Սեուլում եւ աշխարհի այլ քաղաքներում:

Նշենք, որ ֆիլմը արժանացել է երեք հեղինակավոր մրցանակների՝ Ռուսաստանի կինոարվեստների Ակադեմիայի «Նիկա» բարձրագույն պարգեւին (1993), Սան Ֆրանցիսկոյի միջազգային կինոփառատոնի «Golden Gate» գլխավոր մրցանակին (1995), Բեվերլի Հիլզի միջազգային կինոփառատոնի «Golden Palm» բարձրագույն պարգեւին (2003):

Փարաջանովի արվեստի ջերմեռանդ երկրպագուներից մեկը՝ հռչակավոր իտալացի Տոնինո Գուերան ֆիլմը դիտելուց հետո ասել է. «Մեր մեծ Փարաջանովի կյանքի վերջին ամիսների մասին պատմող Վարտանովի ֆիլմը ինձ անչափ հուզեց, միաժամանակ ուժ հաղորդեց շարունակելու եւ անցնելու այն հրաշալի հեքիաթի ճանապարհով, որով անցել է Մաստրոն»:

2005-ին «Մոսկվա» կինոթատրոնում ֆիլմը վերջապես ներկայացվում է Երեւանի հանդիսատեսին: Անշուշտ մեր մշակութային կյանքում սա իրադարձություն էր, քանի որ շնորհիվ այս ֆիլմի մենք ականատես դարձանք Փարաջանովի կյանքի վերջին օրերի երազներին, նրա «խոստովանություն» անավարտ ֆիլմի անսովոր տեսարաններին, դեռի Անմահություն «քայլող» նրա անկրկնելի երթին...

Սա Մ. Վարտանովի վերջին աշխատանքն էր: Ափսոս...

Սակայն մխիթարվենք, որ նա ձգտում էր միշտ հարուցանել հայ մշակույթը: Արածն էլ քիչ չէ: Եվ նա կհիշվի հենց իր այդ թողածով...

ՄԵՐԳԵՅ ԳԱԼՍՏՅԱՆ

Բժիշկների համաշխարհային նվագախմբի բարեգործական համերգը Երեւանում

Երեք տարի առաջ Բեռլինում գործող ադմինիստրատիվ կենտրոնը նախաձեռնեց ու ստեղծեց «Բժիշկների համաշխարհային նվագախումբ», որի հիմնադիրը եւ դիրիժորն է Եվրոպայում ամենամեծ բժշկական հաստատության՝ «Շարիտե» համալսարանի ռեկտոր եւ պրոֆեսոր, ստաբան Շտեփան Վիլիխը: Հանրաճանաչ ստաբանն իր շուրջ է հավաքել 300 երաժիշտ բժիշկների, որոնք տարին երկու անգամ աշխարհի տարբեր երկրներում բարեգործական համերգներ են տալիս:

Եվ ահա այդ նվագախմբի հերթական բարեգործական համերգից հետո Քվինդլենդ քաղաքում (Օհայո նահանգ), որին մասնակցում էր նաեւ Հայաստանից ատամնաբույժ-ջութակահար Արմինե Մաժինյանը, մեր հայ երաժիշտը նվագախմբին հրավիրում է Հայաստան:

Ինչպես **«Ազգի»** հետ զրույցում նշեց տկն **Մաժինյանը.** «Հրավերը մեծ հաճույքով ընդունվեց: Մեկ ամբողջ տարի մենք պատրաստվում էինք նվագախմբին ընդունելու եւ, արդեն կարող ենք ասել, որ այն ստացվում է: Հունվարի 17-ին կայանալիք բարեգործական համերգի տոմսերը լավ վաճառվում են, եւ

հայ հանդիսատեսը հետաքրքրված է երաժիշտ-բժիշկների այդ հրաշալի նախաձեռնությամբ»: Արմինե Մաժինյանը նշեց, որ մոտ 3 միլիոն բարեգործական համերգից ակնկալվող հասույթը կտրամադրվի Հայաստանի «Փրկություն հաշմանդամ երեխաներին» հասարակական կազմակերպությանը, որտեղ այսօր հատուկ խնամքի տակ են գտնվում 500 մտավոր կարողություններով հաշմանդամ երեխաներ:

Հայաստանում անցկացվող բարեգործական համերգի համար մոտ 100 երաժիշտներ հավաքվել են, ու նրանց չորս ամիս առաջ ուղարկվել է համերգի պարտիտուրները: Համերգից մեկ շաբաթ առաջ նրանք կժամանեն Հայաստան, ու նրանց հետ կանցկացվեն փորձեր: Համերգին կմասնակցի նաեւ հանրաճանաչ ջութակահար Սերգեյ Խաչատրյանը: Նվագախմբում կան հայ բժիշկ-երաժիշտներ Գեղամ Գրիգորյանը Շվեյցարիայից, Տիգրան Թորոսյանը Լեհաստանից, Լի Շահինյանը ԱՄՆ-ից եւ, իհարկե, Արմինե Մաժինյանը Հայաստանից:

Համերգի ընթացքում կհնչեն Ալեքսանդր Հարությունյանի «Տոնական նախերգանք», Չայկովսկու «Ջութակի կոնցերտ» եւ Բեթհովենի «Երրորդ սիմֆոնիան» ստեղծագործությունները: Նշենք, որ «Բժիշկների համաշխարհային նվագախմբի» բարեգործական համերգն իրականացվում է ՀՀ առողջապահության եւ ՀՀ մշակույթի նախարարությունների աջակցությամբ եւ այն տեղի կունենա հունվարի 17-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում:

Համերգն անց է կացվում ՀՀ նախագահի տիկնոջ՝ Ռիտա Սարգսյանի հովանու ներքո:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԳՈՒՅԺ

Վախճանվել է Գեորգի Գարանյանը

Հունվարի 11-ին առավոտյան սրտի կանգից հանկարծամահ է եղել սիրված ու ճանաչված երաժիշտ, սաքսաֆոնահար Գեորգի Գարանյանը: 75-ամյա երաժիշտն իր մահկանացուն կնքել է Կրասնադարում, ուր հյուրախաղերի էր մեկնել: 50-ականներին Գարանյանը իր երաժշտական կարիերան սկսել է «Ոսկե յոթնյակ» անսամբլում: Տարիներ անց Գեորգի Գարանյանը հրավիրվում է համամիութենական ռադիոյի անսամբլ եւ հենց այդտեղ էլ մեծ ճանաչում է ձեռք բերում: Այդ տարիներին Գարանյանը տարբեր ջազային նվագախմբերի հետ հանդես էր գալիս ու մասնակցում բազմաթիվ փառատոնների թե Ռուսաստանում, եւ թե՝ արտերկրում: Գարանյանը ոչ միայն կատարող երաժիշտ էր, այլեւ կոմպոզիտոր: Նա մի քանի տասնյակ ֆիլմերի համար գրել է երաժշտություն եւ 1993-ին նրան շնորհվել է ՌԴ ժողովրդական արտիստի կոչում: Գարանյանը երկար տարիներ ղեկավարում էր Մոսկվայի կրկեսի նվագախումբը լինելով գլխ. դիրիժոր: Իսկ Գարանյանի ստեղծած երաժշտական դասագիրքը՝ «Գործիքային եւ վոկալ-գործիքային եւ էստրադայի երաժշտական ձեւավորման ուղեցույց» առ այսօր ՌԴ-ի բոլոր երաժշտական բուհերում համարվում է կարեւոր դասագիրք: Գարանյանի «Ջազ-5» հեռուստահաղորդաշարը մշտապես եղել է եւ կմնա ամենասիրված ու սպասվածը «Կուլտուրա» ալիքում: Ցավոք, Գեորգի Գարանյանը այլեւս մեզ հետ չէ:

Մ. Մ.

Մահացավ Անահիտ Սահինյանը

Ամանորի, ինչպես եւ մեր թերթի արձակուրդի օրերին կյանքին հրաժեշտ տվեցին հայ հասարակական-մշակութային աշխարհի անվանի մարդիկ: Հունվարի 7-ին 93 տարեկանում մահացավ արձակագիր, հրապարակախոս Անահիտ Սահինյանը: Աշխատանքային եւ ստեղծագործական հարուստ կենսագրություն ուներ Անահիտ Սահինյանը, հրատարակչական եւ խմբագրական աշխատանքի մեծ փորձ. 1940-ականներին աշխատել է Հայրենիքում, եղել մանկապատանեկան գրականության խմբագրության վարիչ, ապա խմբագրել է «Արարատ» շրջանային թերթը, 1969-ից մինչեւ 80-ականների վերջը «Պիոներ» ամսագրի խմբագիրն է եղել:

Անդրանիկ վիպակը՝ «Վայելի» խորագրով, տպագրվել է 1942-ին՝ նախանշելով հեղինակի գրական հավատամքը եւ դավանած ռեալիստական ուղղությունը: Հաջորդ՝ «Խաչուղիներ» վեպը (1946) նախապատերազմական եւ հետպատերազմական ֆոնին ներկայացնում է քաղաքային մտավորականության կյանքը: Երկրի համար ոռոգման՝ կենսական խնդիրն էր նվիրված 1955-ին տպագրված «Ծարավ» վեպը, որի համար հեղինակը 1981-ին արժանացավ ՀՍՍՀ պետական մրցանակի: 1974-ին լույս տեսած «Կարոտ» վեպը 30-ականների դրամատիկ իրադարձությունների, բարդագույն ժամանակների եւ մարդկային փշրված ճակատագրերի մասին է: Սահինյանը թեմատիկ եւ ժանրային առումով բազմազանություն որոնող գրող էր՝ իրական դեպքերին արձագանքող, նկարագրական ոճի հետեւորդ: Դրա վկայությունը իր վեպերն ու պատմվածքների բազմաթիվ ժողովածուներն են («Բարեկամներ», «Վերադարձի արահետներով», «Ուշացած ժամադրություն», «Կեռամաններ»): Նա ակտիվ է եղել նաեւ հրապարակախոսության ժանրում, մամուլում, նաեւ **«Ազգ»**-ում, նրա ստորագրությամբ տպագրվել են բազմաթիվ ակնարկներ, ուղեգրություններ, նոթեր:

Վերջին տարիներին լույս տեսած գրողի մի քանի գրքեր մտավորական հասարակության մեջ բավականին հետաքրքրություն ունեցան («Սեփական ոսնահետքերով» (2000)-հուշագրություն, հրապարակախոսական նյութերի, ակնարկների «Ձայն բարբառո հանապատի»-երկհատորյա ժողովածու, «Ինքնադիմանկարի փորձ»-ինքնակենսագրական պատում):

Դպրոցները վերաբացվել են

Հունվարի 11-ից հանրապետությունում վերաբացվել են կրթօջախները, որոնք փակվել էին դեկտեմբերի 8-ից Հայաստանի կրթության եւ գիտության նախարար Արմեն Ազոյանի հրամանով՝ կապված սուր շնչառական հիվանդությունների արագ տարածման հետ:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում առաջին կիսամյակի գնահատականները կամփոփվեն այս ամիս:

Սուր շնչառական հիվանդությունների ու գրիպի դեպքերը նախորդ տարվա դեկտեմբերի վերջին տասնօրյակի համեմատ, մասնագետների վստահմամբ, այս օրերին կտրուկ նվազել են:

Ն. Մ.

Թուրքական թերթն անդրադարձել է Հայոց ցեղասպանությանը

ՍՏԱՄԲՈՒԼ, 11 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ - ՀԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ: Թուրքական «Թարաֆ» թերթի հոդվածագիրներից մեկն անդրադարձել է Էդուարդ Գալյանոյի «Հայելիներ» գրքին, որ նաեւ թուրքերեն է թարգմանվել:

Հոդվածագրի կարծիքով, գրքում հեղինակը ընդարկում է այն տեսությունը, որ անտարբերությունը մոռացումի ազգականն է: Հեղինակն անդրադարձել է նաեւ Հայոց ցեղասպանության հարցին: «Օսմանյան կայսրությունը բաժան-բաժան էր լինում, եւ դդումը պայթեց հայերի գլխին»,- գրել է Գալյանոն՝ նկարագրելով հայերի կոտորածը: «Թալանված ու հրկիզված տներ, անոթի, ծարավ, անվերջանալի ճանապարհների վրա սփռված քարավաններ, գյուղերի հրապարակներում օրը ցերեկով բռնաբարված կանայք, գետերի մեջ լողացող մարդկային դիակներ». այսպես է նա նկարագրել հայկական կոտորածները, նշելով, որ սպանված ու Թուրքիայից վտարված հայերը Հիսլերի գազախցերի ու համակենտրոնացման ճամբարների «ավետաբերը» եղան: Երբ Հիսլերը գրավում էր Լեհաստանը, գիտեր, որ նախ բավականին աղմուկ կբարձրանա, բայց շուտով կմոռացվի: Այդ մասին վստահեցնելով իր խորհրդականներին եւ հիշեցնելով Թուրքիայից վտարված հայերին՝ նա ասում էր. «Այսօր կա՞ մեկը, որ հիշում է հայերին»:

AZG NEW PDF.qxd 1/11/2010 11:38 PM Page 1

Հայ շախմատիստները զիջեցին առաջատարի դիրքերը

Երեկ ոչ-ոքի՝ ռուսների հետ

Մարզական իրադարձություններով հարուստ մրցաշրջան-2010-ում հայ մարզիկներից առաջինն իրենց ելույթները սկսեցին շախմատիստները: Հայաստանի տղամարդկանց հավաքականը Լեւոն Արոնյան, Վլադիմիր Հակոբյան, Գաբրիել Սարգսյան, Արման Փաշիկյան, Տիգրան Պետրոսյան, Տիգրան Քոթանջյան կազմով մասնակցում է Թուրքիայի Բուրսա քաղաքում ընթացող շախմատի աշխարհի թիմային 7-րդ առաջնությանը: Մրցաշարին մասնակցում են 10 թիմեր, որոնց թվում են մայրցամաքների չեմպիոնները, շախմատի համաշխարհային վերջին օլիմպիադայի մրցանակակիրները, կազմակերպիչ երկրի հավաքականը եւ վերջինիս կողմից հրավիրված Ադրբեջանի ու Հունաստանի շախմատիստները: Շրջանաձեւ մրցակարգով անցկացվող մրցաշարի հաղթողը հայտնի կդառնա հունվարի 13-ին: Կանոնակարգի համաձայն, մինչեւ 30-րդ քայլը մրցակիցներն իրավունք չունեն հաշտություն կնքել:

Հայաստանի հավաքականը մասնակցել է աշխարհի վերջին 3 թիմային առաջնություններին (1997՝ Լյուցեռն, 2001՝ Երեւան, 2005՝ Բեեր Շեւա) եւ բոլորում էլ դարձել է բրոնզե մրցանակակիր:

Մեր շախմատիստներն անհաջող մեկնարկեցին: Առաջին տուրում Հայաստանի հավաքականը 1,5-2,5 հաշվով զիջեց Ադրբեջանի շախմատիստներին, որոնց հաղթել էր թե օլիմպիադայում, թե Եվրոպայի թիմային առաջնությունում: Վճռորոշ եղավ 3-րդ խաղատախտակի վրա ՀՀ չեմպիոն Արման Փաշիկյանի պարտությունը Շահրիյար Մամեդյարովից: Արոնյան-Հաշիմով, Հակոբյան-Ռաջաբով, Պետրոսյան-Մամեդով պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: Տուրի մյուս հանդիպումներում գրանցվեցին այսպիսի արդյունքներ. Թուրքիա-ԱՄՆ՝ 1-3 (Վարուժան Հակոբյանը հաղթեց Բորիս Էսենին), Հնդկաստան-Հունաստան՝ 2,5-1,5, Ռուսաստան-Բրազիլիա՝ 2,5-1,5, Եգիպտոս-Իսրայել՝ 1-3:

2-րդ տուրում հայ շախմատիստները 2,5-1,5 հաշվով պարտության մատնեցին Իսրայելի հավաքականին: Ընդհանուր հաղթանակ ապահովեց Լեւոն Արոնյանը՝ պարտության մատնելով Բորիս Գելֆանդին: Հակոբյան-Ռոյզ, Սարգսյան-Սմիրին, Պետրոսյան-Ռոդշտեյն պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: Մյուս մրցախաղերի արդյունքներն են. Բրազիլիա-Եգիպտոս՝ 2,5-1,5, Հունաստան-Ռուսաստան՝ 2,5-1,5, ԱՄՆ-Հնդկաստան՝ 3-1, Ադրբեջան-Թուրքիա՝ 3-1:

3-րդ տուրում ՀՀ հավաքականը մեծ առավելության հասավ թուրքերի նկատմամբ (3,5-0,5): Միակ կետ միավորը թուրք Մերթ Էրդոգդուին բաշխեց Արոնյանը: Հակոբյանը հաղթեց Մուստաֆա Յիլմազին, Սարգսյանը պարտության մատնեց Էմիե Կանին, Փաշիկյանն առավելության հասավ Բորիս Էսենի նկատմամբ: Մյուս հանդիպումներում գրանցվեցին հետեւյալ արդյունքները. Ռուսաստան-Թուրքիա՝ 3,5-0,5, Եգիպտոս-Ադրբեջան՝ 1-3, Իսրայել-ԱՄՆ՝ 1,5-2,5, Բրազիլիա-Հունաստան՝ 1-3:

Բոլորի համար անսպասելի մեր հավաքականը 6-րդ տուրում 1-3 հաշվով զիջեց հույներին: Արոնյան-Կոստրնիաս, Սարգսյան-Բանիկաս պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: Հակոբյանը պարտվեց Պապաիոանուին, Պետրոսյանը զիջեց Հալկիասին: Մյուս մրցախաղերի արդյունքներն են. ԱՄՆ-Բրազիլիա՝ 3-1, Ադրբեջան-Իսրայել՝ 2-2, Թուրքիա-Եգիպտոս՝ 2-2, Հնդկաստան-Ռուսաստան՝ 1,5-2,5:

Հունաստան՝ 2,5-1,5, Իսրայել-Բրազիլիա՝ 2,5-1,5:

ՀՀ հավաքականի հաղթարշավը շարունակվեց նաեւ 4-րդ տուրում: Մեր շախմատիստները 2,5-1,5 հաշվով հաղթեցին բրազիլացիներին: Կրկին թիմի հաջողությունն ապահովեց Արոնյանը՝ պարտության մատնելով Զովանի Վեսկովիին: Հակոբյան-Լեյթաո, Սարգսյան-Ֆիեր, Փաշիկյան-Միլոշ պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: Մյուս մրցախաղերի արդյունքներն են. Հունաստան-Իսրայել՝ 1,5-2,5, ԱՄՆ-Եգիպտոս՝ 3-1, Ադրբեջան-Ռուսաստան՝ 1,5-2,5, Թուրքիա-Հնդկաստան՝ 1-3:

4 տուրից հետո Հայաստանի հավաքականն առաջատարների խմբում էր: Ցավոք հաջորդ երկու տուրերում մեր շախմատիստներն անհաջող խաղացին եւ զիջեցին դիրքերը: 5-րդ տուրում մեր ընտրանին ոչ-ոքի խաղաց հնդիկների հետ: Արոնյանն անդրանիկ պարտությունը կրեց՝ զիջելով Քրիշնան Սասիկիրանին: Կորցրածը հետ բերեց Հակոբյանը՝ հաղթելով Պենտալա Հարիկրիշնային: Սարգսյան-Գանգուլի, Պետրոսյան-Գեթա պարտիաներում խաղաղ դաշն կնքվեց: Մյուս հանդիպումներում գրանցվեցին հետեւյալ արդյունքները. Ռուսաստան-Թուրքիա՝ 3,5-0,5, Եգիպտոս-Ադրբեջան՝ 1-3, Իսրայել-ԱՄՆ՝ 1,5-2,5, Բրազիլիա-Հունաստան՝ 1-3:

7-րդ տուրում Հայաստանի հավաքականն ուժերը չափեց մրցաշարի առաջատարներից մեկի՝ ռուսների հետ: Գրանցվեց ոչ-ոքի: Առաջին խաղատախտակի վրա Լեւոն Արոնյանը 23-րդ քայլին հաշտություն կնքեց Ալեքսանդր Գրիշչուկի հետ: Վլադիմիր Հակոբյանը հաղթեց Ալեքսանդր Մորոզեւիչին, իսկ ահա Գաբրիել Սարգսյանը պարտվեց Եվգենի Տոմաշեւսկուն: Արման Փաշիկյանի եւ Վլադիմիր Մալախովի մրցավեճն ավարտվեց ոչ-ոքի:

7 տուրից հետո Հայաստանի հավաքականը վաստակել է 8 միավոր եւ ընթանում է 5-րդ տեղում: Առաջատարի դերը ստանձնեց ԱՄՆ-ի հավաքականը, որը 2,5-1,5 հաշվով պարտության մատնելով հույներին, վաստակեց 12 միավոր: 11 միավորով 2-րդ տեղում ռուսներն են: 3-րդ հորիզոնականը 9 միավորով զբաղեցնում է Ադրբեջանի հավաքականը, որը 3,5-0,5 հաշվով հաղթեց բրազիլացիներին: 4-րդ տեղում 9 միավորով հնդիկներն են, որոնք 2,5-1,5 հաշվով հաղթեցին Եգիպտոսի ընտրանուն: Առաջին հաղթանակը տոնեցին թուրքերը՝ 2,5-1,5 հաշվով առավելության հասնելով իսրայելցիների նկատմամբ:

Ողբերգություն մեկնարկից առաջ

Անգոլայում մեկնարկել է աֆրիկյան մայրցամաքի գլխավոր մրցաշարը՝ Աֆրիկայի գավաթի խաղարկությունը: Մեկնարկից մի քանի օր առաջ ողբերգություն տեղի ունեցավ: Անկախության համար պայքարող տեղի անջատողականները հրազենային հարձակման էին ենթարկել Տոգոյի հավաքականի ավտոբուսը, որը Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունից ուղեւորվում էր Անգոլա: Հարձակման հետեւանքով զոհվել են հավաքականի գլխավոր մարզչի օգնականը, մամուլի քարտուղարն ու ավտոբուսի վարորդը, մի քանի ֆուտբոլիստներ վիրավորվել են: Տոգոյում եռօրյա սուգ է հայտարարված:

Առայժմ վերջնականապես պարզ չէ, թե կմասնակցի՞ Տոգոյի հավաքականը մրցաշարին: Տոգոյի կառավարությունը պահանջում էր, որպեսզի հավաքականը լքի Անգոլան եւ վերադառնա հայրենիք: Այս առնչությամբ «Մանչեսթր Սիթիում» հանդես եկող Էմանուել Ադեբայորը հայտարարել էր, որ կառավարության պահանջը հարկավոր է կատարել: Ըստ որոշ լրատվամիջոցների, Տոգոյի հավաքականի ամենաբարձր վարձատրվող ֆուտբոլիստն արդեն Անգոլայից մեկնել է Անգլիա:

Ավելի ուշ Տոգոյի սպորտի նախարար Քրիստոֆ Չոնն հայտարարել էր, որ հավաքականը եռօրյա սգից հետո պատրաստ է մասնակցել Աֆրիկայի գավաթի խաղարկությանը:

Իսկ մրցաշարը մեկնարկեց Անգոլայի եւ Մալիի հավաքականների հանդիպումով: Վերջինիս կազմում հանդես են գալիս իսպանական առաջնության երկու «աստղեր»՝ Սեյդու Կեյտան «Բարսելոնից» եւ Ֆրեդերիկ Կանուտեն «Սեւիլիայից»: Խաղասկիզբը շատ հաջող էր անգլիացիների համար: Առաջին խաղակեսում Ֆլավիո Ամադուն երկու անգամ գրավեց Մալիի հավաքականի դարպասը: Ընդմիջումից հետո դաշտի տերերը 2 անգամ հաջողությամբ իրացրին 11 մ հարվածները: Թվում էր, թե հանդիպման ելքը վճռված է: Սակայն 79-րդ րոպեին Կեյտան կրճատեց հաշիվը, իսկ խաղավարից 2 րոպե առաջ Կանուտեն 2-րդ գոլը խփեց: Ավելացված ժամանակում Մալիի ֆուտբոլիստները պարզապես հրաշք գործեցին: Կեյտան եւ Մուստաֆա Յատաբարեն 2 անգամ գրավեցին մրցակցի դարպասն ու Մալիի հավաքականին փրկեցին պարտությունից (4-4):

ՄՈՍԿՈՎՅԱՆ ՄՐՑԱՇԱՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

«Փյունիկը» Մոսկվայում կխաղա փորձնական կազմով

ՖՈՏՈԼՈՒՐ

Նոր մրցաշրջանում հայկական ֆուտբոլային թիմերից առաջինն ասպարեզ դուրս կգա երկրի բազմակի չեմպիոն «Փյունիկը», որը կմասնակցի հունվարի 16-ին Մոսկվայում մեկնարկող «Համագործակցության գավաթի» խաղարկությանը: «Փյունիկն» ընդգրկվել է «Դ» խմբում, որտեղ մրցելու է Ուզբեկստանի չեմպիոն «Բունեդկորի», Լիտվայի ուժեղագույն ակումբ «Էկրանասի» եւ Մոլդովայի փոխչեմպիոն «Դաչիայի» հետ:

Երեկ կայացած մամուլի ասուլիսում «Փյունիկի» գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը տեղեկացրեց, որ թիմը մոսկովյան մրցաշարին կմասնակցի փորձնական կազմով: Թիմի հիմնական կազմը Վարդան Մինասյանի գլխավորությամբ մարզումները կշարունակի Երեւանում, իսկ Մոսկվայում այս օրերին 18 ֆուտբոլիստներ մարզիչներ Ռաֆայել Նազարյանի ու Վարազդատ Ավետիսյանի գլխավորությամբ նախապատրաստվում են «Համագործակցության գավաթի» մրցաշարին: Այդ ֆուտբոլիստներից երեքը հայ են, որոնք համարվում են Հայաստանի մինչեւ 17 եւ 19 տարեկանների պատանեկան հավաքականների թեկնածուներ: Երեք ֆուտբոլիստներ Չիլիից են, մնացածները՝ աֆրիկյան երկրներից: Եթե հարկ լինի, նշված ֆուտբոլիստներին կմիանան «Փյունիկ-2-ի» 4-5 խաղացողներ:

Ըստ Վարդան Մինասյանի, որը Մոսկվա չի մեկնի, մոսկովյան մրցաշարը հնարավորություն կընձեռի փորձարկել լեգեոնականներին, որոնցից աչքի ընկածները կմիանան «Փյունիկի» հիմնական կազմին ու կմասնակցեն հունվարի 24-ին Սոչիում սկսվող ուսումնամարզական հավաքին: Փորձնական կազմով մրցաշարին մասնակցելը գլխավոր մարզիչը բացատրում է այն փաստով, որ «Փյունիկի» մի խումբ ֆուտբոլիստներ Հայաստանի երիտասարդական հավաքականի խաղացողներ են, որոնց մարտի 2-ին հարկ կլինի ընտրական մրցախաղ անցկացնել իռլանդացիների հետ: Ուստի նրանց նախապատրաստական շրջանը կխաթարվեր, եթե մասնակցեին «Համագործակցության գավաթի» մրցաշարին: Բացի այդ, Սարգիս Հովսեփյանը, Վահագն Մինասյանն ու Դավիթ Մանոյանը վնասվածքներ ունեն եւ չեն կարող հանդես գալ Մոսկվայում:

«Փյունիկի» կազմում որոշ փոփոխություններ են կատարվել: Թիմ է հրավիրվել ամերիկահայ Արգին Նազարյանը, որն անցած տարի մասնակցել էր Երեւանում կայացած Համահայկական խաղերի ֆուտբոլի մրցաշարին: Թիմից հեռացել են դարպասապահ Գրիգոր Մելիխեթյանը, որը մարզվում է «Իմպուլսում», Նորայր Սահակյանն ու Արտակ Անդրիկյանը, որոնք տեղափոխվել են «Ուլիս»: Անցած տարի «Փյունիկում» հանդես եկած Մոսկվայի «Սպարտակի» սան Արտակ Ալեքսանյանը մեկ տարվա պայմանագիր է կնքել ռուսական «Ուրալի» հետ: Իսկ Արթուր Եդիգարյանը ներկայումս հանդես է գալիս Իրանի «Պաս» թիմում:

«Հաշիսն» դժվարին պայքար է սպասում

Հունվարի 14-ին Երեւանի «Հաշիսը» Օրենբուրգում բասկետբոլի Եվրոպայի գավաթի խաղարկության պատասխան հանդիպումը կանցկացնի տեղի «Նադեժդայի» հետ: «Հաշիսի» առջեւ բավական դժվարին խնդիր է ծառացած, քանի որ հունվարի 7-ին Երեւանում կայացած խաղում մեր թիմը պարտվել էր 69-80 հաշվով: Հաջորդ փուլ դուրս գալու համար «Հաշիսը» պետք է մրցակցի հարկի տակ հաղթի նվազագույնը 12 միավորի տարբերությամբ:

ՖՈՏՈԼՈՒՐ

Երեւանյան խաղում հաշիսցիներն աչքի չընկան նետումների դիպուկությամբ, ինչն էլ պարտության պատճառ դարձավ: Մեր բասկետբոլիստուհիները հաճախակի էին հեռու տարածություններից նետում, սակայն գնդակը չէր հայտնվում զամբյուղում: Իսկ մրցակիցը տիրելով գնդակին, արդյունավետ գրոհներ էր կազմակերպում ու ավելացնում էր միավորների տարբերությունը: «Հաշիսի» գործողությունների վրա խիստ ազդեց թիմի խաղարկող Մաուրիտա Ռեյդի բացակայությունը:

Խաղից հետո կայացած մամուլի ասուլիսում «Հաշիսի» գլխավոր մարզիչ Գիա Ղազանչյանը հետեւյալն էր նշել. «Թիմում կային նորեկներ, ինչն իր ազդեցությունն ունեցավ, քանի որ նրանք միասին հանդես գալու փորձ դեռեւս չունեն: Ամերիկացի 2 բասկետբոլիստուհիները վաստակավոր տպավորություն չթողեցին, սակայն դա նրանց լավագույն խաղը չէր: Նրանք ավելիին են ընդունակ եւ դեռեւս կդրսեւորեն ունակությունները: Ամեն դեպքում Ամանդա Զեֆոնն այսօր լավ տպավորություն թողեց: Ադեոլան եւս մեծ ներուժ ունի: Բոյանա Վուլիչը վաստակավոր էր, նա սամոֆսի ցավեր ուներ, ուստի չկարողացավ ողջ ուժով հանդես գալ: Նա մի քանի անգամ փոխարինում խնդրեց, քանի որ ի վիճակի չէր երկար ժամանակ գտնվել խաղահրապարակում: Մաուրիտա Ռեյդն այլեւս մեր թիմում չէ եւ դա հայտնի դարձավ տարեվերջին: Խնդիրը հիմնականում պայմանավորված էր նրա գործակալով, իսկ Մաուրիտան դեմ չէր շարունակել եւ լույթները Հայաստանում: Ամեն ինչ արագ ստացվեց եւ մեզ համար անակնկալ էր, որ Ռեյդը չժամանեց Հայաստան: Նրա բացակայությունը եւս ազդեց թիմի գործողությունների վրա:

Մենք բնավ էլ որպես զբոսաշրջիկներ չենք մեկնելու Օրենբուրգ: Մենք լավ թիմ ունենք եւ հաջորդ խաղում կարող ենք ավելի լավ խաղալ, քանի որ նորեկներն արդեն մերվում են կոլեկտիվին, խաղային պրակտիկա են ձեռք բերում: Իհարկե, գիտակցում ենք, որ «Նադեժդան» շատ լավ խաղացողներ ունի եւ Ռուսաստանի 3-րդ թիմն է, ուստի դժվարին պայքար է սպասում»:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW PDF.qxd 1/11/2010 10:37 PM Page 1

Օրվա հետքերով

2012-ի վերջին Nibiru-ն կանցնի Երկրի մոտով



NASA-ն 1982-ին խոստովանեց Արեգակնային համակարգում եւս մեկ նոր մոլորակի գոյությունը: 1983-ին արձակված IRAS արբանյակը արձանագրեց շատ մեծ օբյեկտի գոյությունը, որը չափերով Ուրանից մեծ է եւ Յուպիտերից փոքր:

JPL IRAS ծրագրի մասնակից գիտնականներից մեկը «Վաշինգտոն փոստ» թերթին հայտնել է, որ թերեւս Յուպիտերի չափ վիթխարի երկնային մարմին է հայտնաբերված ուղեծրային աստղադիտակով Օրիոնի (Հայկի) համաստեղության ուղղությամբ: Նրա խոսքերով, բոլոր կառավարությունները գիտեն այդ մասին եւ միջոցներ են ձեռնարկում Nibiru-ի կամ X մոլորակի հայտնվելու դեպքում իրենց իշխանությունը պահպանելու նպատակով:

Nibiru-ն Գորշ Թզուկ խավար աստղի շուրջը պտտվող 7 մոլորակներից մեկն է: Nibiru-ի ուղեծրի հակումը 30 աստիճան է Արեգակի շարժման հարթության կամ էկլիպտիկայի նկատմամբ: Քանի որ Nibiru-ն անցնում է Արեգակնային համակարգի միջով, շարժվելով մյուս մոլորակների նկատմամբ հակառակ ուղղությամբ, դա երբեմն փոխում է մոլորակի ուղեծիրը, դառնալով ավերածությունների պատճառ:

Անցումը մեծ ազդեցություն է գործում, բայց տեւում է մի քանի շաբաթ կամ ամիս: Nibiru-ն բոստրագույն է, անհարթ, շրջապատված է մի քանի արբանյակներով:

Nibiru-ն կամ դրա արբանյակները մեղավոր են Maldek-ի կործանման համար, որը ներկայումս աստերոիդների գոտի է: Դրանք նաեւ պատճառ են դարձել Լուսնի եւ Արեգակնային համակարգի մոլորակների վրա խառնարանների կամ մակերեւութային ճեղքվածքների առաջացման, դրանց հակման առանցքի եւ ուղեծրերի փոփոխման համար:

Nibiru-ն մեղավոր է Ատլանտիդայի անհետացման եւ անվերջանալի ջրհեղեղների համար, կարող օղակ է արեգակնային համակարգի եւ Գորշ Թզուկ խավար աստղի համակարգի միջեւ: Անցյալում մարդիկ Nibiru-ն անվանել են «թեւավոր սկավառակ»:

2009-ի մայիսի 15-ից Nibiru-ն մարդկանց երեւում է որպես կարմրավուն օբյեկտ: 2011-ի մայիսին մոլորակը տեսանելի կլինի անզեն աչքով: 2012-ի դեկտեմբերի 21-ին Nibiru-ն կանցնի Երկրի էկլիպտիկայով որպես վառ կարմիր աստղ եւ չափերով նման կլինի երկրորդ Արեգակի: Տեղի կունենան երկրաշարժեր, կլինի վաս եղանակ:

2013-ի փետրվարի 14-ին Երկիրը կանցնի Nibiru-ի եւ Արեգակի միջեւ: Բեւեռները կտեղափոխվեն, մոլորակի հակումը կփոխվի: Կլինեն ուժեղ երկրաշարժեր եւ ցունամիներ: 2014-ի հուլիսի 1-ից հետո Nibiru-ն կհեռանա գալակտիկայի մեր մասից: NASA-ն թաքցնում է այս ամենը, որպեսզի խուճապ չառաջացնի: ԿՀՎ-ն ենթադրում է, որ բեւեռների տեղափոխման ժամանակ Երկրի բնակչության 2/3-ը կարող է զոհվել: Վատիկանը նույնպես տեղյակ է այս ամենին:

Պ. Ք.

REA.am

Տեղեկատվության, գովազդի եւ հայտարարությունների կայք

Բացառիկ հնարավորություն՝ բոլորի համար

Նորաստեղծ www.rea.am (real estate of Armenia) ինտերնետային մասնագիտացված պորտալն իր տեսակի մեջ մի շարք առումներով բացառիկ է Հայաստանում:

1. Կայքն **ունի 4 բաժիններ՝** անշարժ գույք, շարժական գույք (ավտոմեքենա, կահույք, էլեկտրոնային ապրանքներ եւ այլն), աշխատաշուկա եւ ծառայություններ: Այսինքն, **մեկ մասնագիտացված կայքում կարելի է** տեղադրել եւ ծանոթանալ բոլոր այս **4** ոլորտների առաջարկի ու պահանջարկի մասին մասնավոր անձանց հայտարարություններին եւ կազմակերպությունների գովազդային առաջարկներին:

2. Կայքը **եռալեզու է (հայերեն, ռուսերեն, անգլերեն)** եւ յուրաքանչյուր լեզվի էջն ունի իր առանձնահատկությունները:

3. Ձեր հայտարարություններն ու գովազդը **www.rea.am** կայքում անմիջապես հասանելի են դառնում **ավելի քան 300 հազար ինտերնետից օգտվողների համար Հայաստանում եւ միլիոնավոր ինտերնետից օգտվողների համար ամբողջ աշխարհում:**

4. Յուրաքանչյուրը Հայաստանում կամ **աշխարհի ցանկացած երկրից,** այցելելով **www.rea.am** ինտերնետային կայք, կստանա իրեն անհրաժեշտ տեղեկությունները մեր երկրում բնակարան գնելու կամ վարձակալելու, ավտոմեքենա վարձույթով վերցնելու, աշխատանքի շուկայի առաջարկի եւ պահանջարկի, տարբեր ծառայությունների եւ այլ առաջարկությունների մասին:

5. Պահանջվող տեղեկությունը հաշվված վայրկյանների ընթացքում գտնելու համար գործում են **որոնման եւ ընդլայնված որոնման հզոր համակարգերը:**

6. Տվյալների բազան անընդհատ **թարմացվում է:**

7. **www.rea.am** կայքի այցելուները կծանոթանան նաեւ բոլոր այս **4** ոլորտների վերաբերյալ նորություններին, շուկաներում իրավիճակի վերլուծությանը, բազային տվյալներին, գործող ընկերություններին եւ բազմաթիվ այլ տեղեկությունների:

8. Հայտարարությունների եւ գովազդի համար գործում են **ամենացածր գները** Հայաստանում, իսկ երկարաժամկետ հայտարարությունների համար **ամենամեծ զեղչերը:**

Հայտարարություններն ընդունվում են
Մհեր Մկրտչյան փ. 10 հասցեում՝
աշխատանքային օրերին ժամը 10:00-18:00,
շաբաթ-կիրակի օրերին ժամը 12:00-16:00,
ինչպես նաեւ էլեկտրոնային եղանակով edram
համակարգի միջոցով:
Տեղեկությունների համար զանգահարել 56-36-57,
էլեկտրոնային հասցե՝ info@rea.am



ՕԱՆՈՒՑՈՒՄ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում առկա օդառակիչ սարքերի վթարային եւ ընթացիկ սպասարկում իրականացնող կազմակերպություն ընտրելու նպատակով հրապարակային մրցույթի կազմակերպման մասին

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է հրապարակային մրցույթ՝ 2010թ.-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում առկա օդառակիչ սարքերի վթարային եւ ընթացիկ սպասարկում իրականացնող կազմակերպություն ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձինք, որոնք մրցույթի հայտը ներկայացնելու պահին չունեն ժամկետանց պարտքեր՝ Հայաստանի Հանրապետության հարկային եւ սոցիալական ապահովագրության վճարների գծով:

Մրցութային առաջարկություններն անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետն է 2010թ. փետրվարի 15-ը, ժամը 17-00-ին:

Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամն է 2010թ. փետրվարի 18-ին ժամը 17-00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2010թ. փետրվարի 24-ին ժամը 17-00:

Մրցույթին մասնակցելու հրապարակային ծանուցումը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու ծանուցումը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Գործերի կառավարչություն հեռ. 59-28-90, ներքին՝ 18-90:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

Ի փոփոխումն ՀՀ կենտրոնական բանկի կողմից 24.11.09թ. տրված հայտարարությունների տեղեկացնում ենք, որ՝

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից համակարգչային, ցանցային եւ տպող (պատճենահանող) սարքավորումների սպասարկման համար անհրաժեշտ պահեստամասեր եւ նյութեր ձեռք բերելու նպատակով կազմակերպության ընտրության հրապարակային մրցույթի ամփոփման ժամկետը 2009թ. դեկտեմբերի 30-ից տեղափոխվել է ս.թ. հունվարի 14-ը:

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կարիքներն ապահովելու համար տպագրական աշխատանքներ իրականացնող կազմակերպության ընտրության հրապարակային մրցույթի ամփոփման ժամկետը 2009թ. դեկտեմբերի 30-ից տեղափոխվել է ս.թ. հունվարի 14-ը:

3. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի շենքերի եւ շինությունների ընթացիկ վերանորոգման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության ընտրության հրապարակային մրցույթի ամփոփման ժամկետը 2009թ. դեկտեմբերի 30-ից տեղափոխվել է ս.թ. հունվարի 14-ը:

4. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի շենքերի եւ շինությունների ընթացիկ վերանորոգման աշխատանքների իրականացման նպատակով կազմակերպություն ընտրելու համար հրապարակային մրցույթի ամփոփման ժամկետը 2009թ. դեկտեմբերի 30-ից տեղափոխվել է ս.թ. հունվարի 14-ը:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

Հայտարարություն

Սույն թվականի հունվարի 15-ին, ժամը 13-00 -ին **«Էլբաս» ՓԲԸ «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ը** կազմակերպում են հասարակական լսումներ ՀՀ ք. Երեւան Շարուրի 37/29 հասցեում նախատեսվող մարտկոցների արտադրության գործարանի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ Ք.Երեւան Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22-15-68:

ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 11.01.2010 թ.

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Միջին փոխարժեք
USD	1	ԱՄՆ դոլար	378.21
EUR	1	ԵՎՐՈ	549.20
RUR	1	Ռուս. ռուբլի	12.87
GEL	1	Վրաց. լարի	222.53

www.azg.am

Լրատուական գործունեությունը իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 11.01.2010, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: